ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1735: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

ՈՒՐԲԱԹ, 20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ.
№ 2 (420)
www.syuniacyerkir.am

Տղաները մեկնում են ծառայության

Մարզկենտրոնում հունվարի 12-ին մեկնարկեց ձմեռային զորակոչը: Զինակոչիկների առաջին խումբը, թվով 26 հոգի, մեկնեց հանրապետական հավաքական: Այդ առթիվ Կապանի զինկոմիսարիատի առջեւի պուրակում տեղի ունեցավ հանրահավաք, որին մասնակցում էին երկրորդ աշխարհամարտի եւ թիկունքի վետերաններ, Արցախյան գոյամարտի եւ ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցներ, պետական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, զինակոչիկների հարազատներ եւ մտերիմներ:

Հանրահավաքը ներածական խոսքով բացեց Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը, ով կարեւորեց հանգամանքը, որ նորակոչիկները փոխարինելու են գնում ապրիլյան պատերազմի քուրայով անցած իրենց ավագ ընկերներին: Նա շնորհակալություն հայտնեց զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի բոլոր անդամներին՝ կատարած աշխատանքի համար, ապա «Կապանի ԲՈՒԱՏ» ՓԲ ընկերության վարորդ Արթուր Առաքելյանին հանձնեց պաշտպանության նախարարի շնորհակալագիրը՝ զինակոչիկներին հանրապետական հավաքական տեղափոխելու գործում բարձր պատասխանատվություն ցուցաբերելու համար:

ՀՀ պաշտպանության նախարարի պատվոգրով պարգեւատրվեցին ապրիլյան պատերազմի մասնակիցներ, տանկիստներ Ռուսլան Խաչատրյանը, Արթուր Ստեփանյանը՝ հայրենիքի սահմանների պաշտպանությանն ակտիվ մասնակցելու եւ առաջնագծում մարտական խնդիրները բարեխղճորեն կատարելու համար: Պաշտպանության նախարարի շնորհակալագիր հանձնվեց ապրիլյան պատերազմի մասնակից Միհրան Առաքելյանի հորը՝ Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Զոհրապ Առաքելյանին (զինվորը կզորացրվի մոտ օրերս): Հանրապետության

էջ 2

Ստորագրվեց համագործակցության մասին համաձայնագիր

Մեղրու համայնքապետարանում դեկտեմբերի 29-ին սոցիալ-տնտեսական համագործակցության մասին համաձայնագիր ստորագրվեց «Պոլիմետալ» խմբի մեջ մտնող «Լիճքվազ» ՓԲ ընկերության եւ Մեղրու համայնքապետարանի միջեւ, որը ստորագրեցին Մեղրու համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանը եւ Կապանի լեռնահարստացման կոմբինատի գլխավոր տնօրեն Դմիտրի Ուշկովը («Լիճքվազ» ՓԲ ընկերության անունից): 2016-ին Մեղրի համայնքում «Պոլիմետալը» ներդրել էր 13 մլն

դրամ, մասնավորապես, համայնքին հատկացվել էր նոր աղբատար մեքենա: Նոր կնքված համաձայնագրով 2017-2018թթ. ընթացքում Մեղրի համայնքում կներդրվի 36 մլն դրամ: Այդ միջոցներով Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրում կկառուցվի մանկապարտեզ: Ինչպես նախատեսվում է համաձայնագրով, ընկերությունը ծրագրում է 2017-2018 թվականների ընթացքում շարունակել համայնքում իրականացվող սոցիալական եւ բնապահպանական միջոցառումներին աջակցությունը: Համայնքների հետ կնքված սոցիալ-տնտեսական համաձայնագրերի շրջանակում (դեկտեմբերի 15-ին ընկերությունը նման համաձայնագիր կնքել էր Կապան քաղաքի հետ) Սյունիքի մարզում «Պոլիմետալ» խմբի ներդրումները 2017 թվականի ընթացքում կգերազանցեն 135 մլն դրամը:

Համաձայնագրի ստորագրումից հետո Մխիթար Զաքարյանը եւ Դմիտրի Ուշկովը իրենց խոսքում, մասնավորապես, այն միտքը հայտնեցին, որ համաձայնագրի ստորագրումը խթան կլինի «Պոլիմետալ» ընկերության եւ Մեղրու համայնքի փոխհամագործակցության գործում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ամեն բանի ժամանակ կայ. եւ ժամանակ՝ երկնքի տակի բոլոր ձեռնարկութեան: Ծնելու ժամանակ, եւ մեռնելու ժամանակ. տնկելու ժամանակ, եւ տնկածը ոչնչացնելու ժամանակ. Սպանելու ժամանակ, եւ բժշկելու ժամանակ. քանդելու ժամանակ, եւ շինելու ժամանակ. Լալու ժամանակ, եւ ծիծաղելու ժամանակ. սգալու ժամանակ, եւ պարելու ժամանակ. Քարեր դէն գցելու ժամանակ, եւ քարեր ժողովելու ժամանակ. գրկելու ժամանակ, եւ գրկելուց հեռանալու ժամանակ. Որոնելու ժամանակ, եւ կորցնելու ժամանակ. պահելու ժամանակ, եւ դէն գցելու ժամանակ, Պատառելու ժամանակ, եւ կարելու ժամանակ, լռելու ժամանակ, եւ խօսելու ժամանակ. Սիրելու ժամանակ, եւ ատելու ժամանակ. պատերազմի ժամանակ, եւ խաղաղութեան ժամանակ:

«Ժողովող», գլուխ Գ, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակել 2017 թվականի ապրիլի 2-ին:
2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 29
Երեւան, ՆՀ-1260-Ն
president.am

ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ. «Արտակարգ իրավիճակների համակարգում աշխատում են անձինք, ովքեր իսկապես սիրում են մեր հայրենիքը, Սյունյաց աշխարհը եւ արժանավոր հայ են...»

2016թ. մարզում գրանցված արտակարգ իրավիճակների, համակարգում իրականացված աշխատանքների եւ հետագա անելիքների մասին է զրույց ը ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փոխգնդապետ Բագրատ Զաքարյանի հետ:

– Պարո՛ն Զաքարյան, ամփոփեք, խնդրեմ, Սյունիքի մարզային փրկարարական վարչության 2016թ. աշխատանքն ընդհանուր գծերով:

– Մեկամյա ժամանակահատվածում ունեցանք մեծ ծեռքբերումներ, կատարեցինք շինարարական եւ մասնագիտական վերապատրաստման բազմաթիվ աշխատանքներ: Ուրախությամբ կարող եմ նշել, որ Կապանի քաղաքային որոնողափրկարարական թիմը ստացավ երրորդ եւ երկրորդ կարգի փրկարարների որակավարում, որը մեզ համար շատ կարեւոր է: Առաջին եւ միջազգային փրկարարի որակավորման աստիճաններ եւս կան, որոնց հասնելը մեր նպատակներից մեկն է:

Այս տարի չափազանց կարեւոր էր նաեւ Շիրակի մարզում անցկացված ուսումնավարժանքին մասնակցելը. հանրապետությունում քաղաքային որոնողափրկարարական չորս թիմ կա, որից մեկը՝ Սյունիքում: Շիրակի մարզում 8-9 բալանոց երկրաշարժի պայմանական իրավիճակ էր ստեղծվել. Կապանի, Քաջարանի եւ Մեղրու բժշկական կենտրոններից բժիշկների եւ բուժքույրերի հետ միասին մասնակցեցինք ուսումնավարժանքին: Դրա արդյունքներով արտակարգ իրավիճակների նախարար երջանկահիշատակ Արմեն Երիցյանի կողմից արժանացանք բարձր գնահատականի եւ խրախուսանքի, ինչը վարչության համար չափազանց կարեւոր է:

Նշանակալից էր նաեւ դեկտեմբերի 29-ին Վաղատինի տարածքում ճանապարհային նորոգված տնակի վերաբացումը, ինչի համար թե՛ համայնքապետերը, թե՛ անտառտնտեսության պետերն իրենց հնարավորության սահմաններում աջակցել են մեզ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության եւ «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ընկերության համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել է խելախոսների (սմարթֆոններ) համար նախատեսված «911 ՍՕՍ» հավելվածը: Համակարգի նպատակն է արտակարգ իրավիճակներում հայտնված կամ դրա ականատեսը դարձած քաղաքացիներին օգնություն եւ տեղեկատվական աջակցություն ցուցաբերել, ինչպես նաեւ արագ եւ թիրախային արձագանքում կազմակերպել: Հավելվածն անվճար է եւ նախատեսված է «Android» եւ «IOS» համակարգերով աշխատող խելախոսների համար: Այս հավել-

էջ 5

Տղաները մեկնում են ծառայության

էջ 1

զինկոմ, գեներալ-մայոր Հենրիկ Մուրադյանի պատվոգրերը հանձնվեցին հրետանավորներ Արտյոմ Առաքելյանին, Նարեկ Ղազարյանին՝ ապրիլյան մարտական գործողություններին ակտիվ մասնակցության համար:

Հայրենիքի ապագա պաշտպաններին բարեմաղթանքի խոսքեր հղեցին Կապանի վետերանների միավորման խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը, Արցախյան գոյամարտի եւ ապրիլյան քառօրյայի մասնակից Սուրիկ Հովսեփյանը, Սյունիքի մարզպետարանի զորահավաքային բաժնի պետ Արսեն Գրիգորյանը: Զորակոչիկներին Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի կողմից հանձնվեցին փոքրիկ նվերներ՝ առաջին անհրաժեշտության պարագաներ: Հայրենասիրական բանաստեղծության ասմունքով հանդես եկավ N13 հիմնական դպրոցի աշակերտուհի Անգելինա Հովհաննիսյանը:

– Անփորձանք ծառայություն ենք մաղթում մեր կրտսեր ընկերներին, Աստված բոլորին պահապան, եթե հարկ լինի, կկանգնենք սահմանների պահապան զինվորների կողքին, ապրիլյան պատերազմը ցույց տվեց, որ հույսներս մեզ վրա պիտի դնենք, - ասաց պահեստազորի սպա, լեյտենանտ Արթուր Ստեփանյանը:

Ոգեւորիչ բացականչությունների եւ բարի մաղթանքների ներքո նորակոչիկներին տեղափոխող ավտոբուսը մեկնեց հանրապետական հավաքակայան:

Սիսիանի Ազատամարտի հրապարակում զինակոչիկներին հայոց բանակ էին ճանապարհում քաղաքային իշխանությունների, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ, հարազատներ եւ բարեկամներ: Հայրենիքի ապագա պաշտպաններին բարի ճանապարհ եւ անփորձանք ծառայություն մաղթեցին Սիսիանի զինկոմ Մինաս Մկրտչյանը, Սիսիանի համայնքի ղեկավար Արթուր Սարգսյանը: Այնուհետեւ նորակոչիկները ծաղիկներ դրեցին մերօրյա ազատամարտի նահատակ Վուրգ Ոսկանյանի հուշարձանին: Սիսիանի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեր Պարգեւ քահանա Ջեյնալյանը պահպանիչ աղոթք կարդաց, նրանց հորդորեց սիրել եւ փայփայել հայոց բանակը: Նորակոչիկները, չխախտելով ավանդույթը, հարգանքի տուրք մատուցեցին Սիսիանի քաղաքային պանթեոնում ննջող նահատակների հիշատակին, ծաղիկներ դրեցին նրանց շիրիմներին եւ նոր մեկնեցին հայրենի քաղաքից սահմանադրական պարտքը կատարելու:

Ձմեռային զորակոչի առաջին հավաքի ժամանակ Գորիսից 25 զինակոչիկ մեկնեց զինծառայության: Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցը համոզմունք հայտնեց, որ նրանք առնականացած կվերադառնան զինվորական ծառայությունից: Գորիսի զինկոմ, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանն իր խոսքում նորակոչիկներին հիշեցրեց մեր պատմության հիշարժան էջերը, վստահեցրեց, որ մերօրյա զինվորները հայոց պատմության նոր էջերի կերտողներն են լինելու: Տղաներին բանակ ճանապարհելիս ծնողների, հարազատների մեջ միախառնվել էին ժպիտն ու արցունքը, հնչում էին քաջալերանքի խոսքեր…

2017թ. ծմեռային զորակոչի առաջին հավաքը Մեղրիում տեղի ունեցավ հունվարի 19-ին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կառուցվածքային փոփոխություններ Սյունիքի մարզպետարանում

ՀՀ կառավարությունը 2016թ. վերջին նիստում (29 դեկտեմբերի) քննարկել է Սյունիքի մարզպետարանին առնչվող հարց՝ «ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի N1795-Ն եւ 2006թ. ապրիլի 27-ի N618-Ն որոշումների մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»:

Ընդունված որոշմամբ Սյունիքի մարզպետն այսուհետ կունենա երեք խորհրդական եւ երկու օգնական, որոնց միջեւ պարտականությունների բաշխումը կկատարի մարզպետը: Խորհրդականներին ու օգնականներին պաշտոնի կնշանակի եւ կազատի մարզպետը:

Մարզպետը կունենա նաեւ մամուլի քարտուղար:

Մարզպետարանի առջեւ դրված խնդիրների եւ գործառույթների իրականացմանը քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու նպատակով մարզպետի կողմից կարող են կազմավորվել մարզպետին կից հանրային ներկայացուցչական խորհրդակցական մարմիններ:

Աշխատակազմում կատարվել են նաեւ հետեւյալ փոփոխությունները.

ա) ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը միացման ձեւով վերակազմակերպվել է առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության,

բ) հողաշինության եւ հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչությունը միացման ձեւով վերակազմակերպվել է աշխատակազմի քաղաքաշինության վարչության,

գ) լուծարվել է տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը,

դ) ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունը վերանվանվել է ֆինանսների եւ գնումների գործընթացների վարչություն,

ե) զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժինը վերակազմավորման ձեւով վերակազմակերպվել է միջազգային համագործակցության եւ զարգացման ծրագրերի վարչության:

Կառավարության որոշումն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կատարված փոփոխությունների արդյունքում Սյունիքի մարզպետարանի աշխատակազմն այսուհետ կունենա կառուցվածքային հետեւյալ ստորաբաժանումները.

1. Վարչություններ

Միջազգային համագործակցության եւ զարգացման ծրագրերի վարչություն

Տեղական ինքնակառավարման եւ հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն

Առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչություն

Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչություն

Ֆինանսական եւ գնումների գործընթացների վարչություն

Քաղաքաշինության վարչություն

Գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչություն

2. Քարտուղարություն

3. Բաժիններ

Իրավաբանական բաժին

Անձնակազմի կառավարման բաժին

Ներքին աուդիտի բաժին

Զորահավաքային նախապատրաստության բաժին

4.Առանձնացված ստորաբաժանումներ

Գորիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն

Կապանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն

Մեղրու սոցիալական աջակցության տարածքային գործակալություն

Սիսիանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն:

Սեփ. լրատվություն

Ստեղծվել է Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ՀՀ կառավարությունը ստեղծել է Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամ:

Սահմանվել է, որ Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, որի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինը Սյունիքի մարզպետարանն է:

Հաստատվել է Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամի կանոնադրությունը: Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Սահակ Հակոբյանը:

Հանձնարարվել է Սյունիքի մարզպետին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել՝ ա) հիմնադրամի գրանցումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բ) հոգաբարձուների խորհրդի ձեւավորումը:

Սեփ. լրատվություն

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.
«Այսօր իմ հոգան ընտանիքիս բարօրությունն է, մտահոգությունս՝ ազգիս վիճակը»

Հունվարի 14-ին լրացավ պետական ու քաղաքական գործիչ, գեներալ-մայոր Սուրեն Աբրահամյանի ծննդյան 70-ամյակը, ով, տարբեր բարձր պաշտոններ զբաղեցնելով, եղել է նաեւ նորակազմ Սյունիքի մարզի առաջին մարզպետը:
Ծնվել է 1947թ. Երեւանում՝ ծառայողի ընտանիքում, սովորել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում, ծառայել խորհրդային բանակում: 1979թ. ավարտել է ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ակադեմիան, որից հետո աշխատել այդ համակարգում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ: 1995-1996թթ. եղել է Սյունիքի հարցերով ՀՀ պետնախարարի աշխատակազմի ղեկավար, տարածաշրջանի ուժային ու պաշտպանական կառույցների համակարգող, 1996-1998թթ.՝ Սյունիքի մարզպետ, 1998թ. մայիսից 1999թ. հունիս՝ Երեւանի քաղաքապետ, 1999թ. հունիսից հոկտեմբեր՝ ՀՀ ՆԳ նախարար: 1993 թվականին ստացել է միլիցիայի գեներալ-մայորի կոչում: 1995թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր, 1998թ.՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ եւ պաշտոնավարել մինչեւ 2002թ.: 2003 թվականից «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ է:
Եվ, այնուհանդերձ, նրա կյանքի կարեւորագույն շրջաններից մեկը կապված է Սյունիքի հետ, ուստի 70-ամյակի կապակցությամբ փորձեցինք հետադարձ հայացք ձգել նրա ապրած կյանքին, գործունեությանն ու առհասարակ մեր ներկա ընթացքի հանդեպ ունեցած նրա վերաբերմունքին ու աշխարհայացքին:

– Պարո՛ն Աբրահամյան, մեկ-երկու նախադասությամբ ներկայացրեք մինչ Սյունիք գալը Ձեր կյանքի նշանակալից իրադարձությունները:

– Տարիների հեռվից եթե գնահատական տամ, այնքան վայրիվերումներն ու ալեբախությունները մի կողմ դնելով՝ պետք է արձանագրեմ, որ մինչ Սյունիք գալը երեւի թե իմ կյանքի ամենանշանակալից իրադարձությունն ընտանիք կազմելն էր: Եթե համառոտ բնութագրեմ այդ շրջանը, կասեմ՝ խորհրդային շրջանի միջին եւ դրանից բարձր խավի չինովնիկի նորմալ կյանք եմ ունեցել:

– Ձեր մուտքը Սյունիք:

– 1988թ. սկսված ազգային-ազատագրական շարժման թոհուբոհի մեջ էի, երբ 1992թ. սկսվեցին հայ-ադրբեջանական հակամարտության լայնամասշտաբ գործողությունները, այն ժամանակվա Սյունիքի գծով ՀՀ պետնախարար Վազգեն Սարգսյանի հետ 1993-ին եկա Սյունիք՝ որպես նրա աշխատակազմի անդամ, այնուհետեւ՝ ղեկավար: Սկիզբ դրվեց Սյունիք-Զանգեզուր պետական ծրագրի մշակմանը, որի առաքելության մասին մինչեւ հիմա էլ շատ մանրամասներ չեն բացահայտվում, բայց գլխավոր նպատակը Սյունիքը հզորացնելն էր, որ ամուր թիկունք պետք է լիներ Ղարաբաղի համար: Տնտեսական ծանր կացությունը, պետական կառավարման համակարգի ստեղծումը, կարգ ու կանոնի հաստատման անհրաժեշտությունն անբնական, խառնաշփոթ իրավիճակ էին ստեղծել ամբողջ հանրապետությունում. ինչպես ասում են, ով թվանք ուներ, նա էր ուժեղ: Սյունիք գալով՝ սկսեցինք օրենքի սահմաններում կարգ ու կանոն հաստատել, պետական կառույցներ ստեղծել, բանակաշինությամբ զբաղվել, որոշակի հաղթանակներ արձանագրել եւ այլն:

– 1996թ. փետրվարի 19-ին հանրապետության կառավարության որոշմամբ նշանակվեցիք նորակազմ մարզի՝ Սյունիքի մարզպետ: Երեւի թե Ձեր կյանքի ամենապատասխանատու շրջաններից մեկն էր:

– Սյունիքը, ի տարբերություն մյուս մարզերի, Ղարաբաղի հետ համահավասար մասնակցել է պատերազմական գործողություններին, հատկապես Կապանն ու Գորիսն արկերի, պայթյունների տակ էին հայտնվել: Բնականաբար, առաջնային խնդիրը պատերազմի հետեւանքները քիչ թե շատ վերացնելն էր, մարդկանց շրջանում հավատի, վստահության մթնոլորտի ստեղծումը. ժողովուրդը պետք է հասկանար իր տարած հաղթանակի ու անկախության գինը: Երկրորդ խնդիրը կառավարման համակարգի ստեղծումն ապահովելն էր. անհրաժեշտ էր տեղակայված ստորաբաժանումների աշխատանքները համակարգել, կարգապահություն հաստատել: Երրորդ խնդիրը զուտ աշխարհաքաղաքական, մենթալիտետային էր. գորիսեցին չէր սիրում կապանցուն եւ հակառակը, սիսիանցին՝ գորիսեցուն եւ այդպես շարունակ: Մի խոսքով՝ չափազանց պատասխանատու պաշտոն էին ինձ վստահել, մանավանդ այն դեպքում, երբ մարզպետական ինստիտուտը դեռեւս նոր էր ձեւավորվում, եւ այնտեղ բազում խնդիրներ կային: Եվ այնուամենայնիվ, անկախ բո-

էջ 6

Լրացավ Սուրեն Աբրահամյանի 70-ամյակը

Սյունիքի առաջին մարզպետ, գեներալ-մայոր Սուրեն Աբրահամյանը 70 տարեկան է:

Շնորհավորում ենք պարոն Աբրահամյանին՝ հոբելյանի կապակցությամբ եւ մաղթում քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, կենսափորձը, իմաստնությունը գործնականում կիրառելու, մեր ժողովրդին ծառայեցնելու զորություն:

Սուրեն Աբրահամյանը Սյունիքի մարզպետի պաշտոնը զբաղեցրեց 1996-98 թվականներին, բայց Սյունիք էր եկել 1993-ի գարնանը՝ Սպարապետ Վազգեն Սարգսյանի հետ, ով այդ ժամանակ Սյունիքի հարցերով Հայաստանի Հանրապետության պետնախարար էր՝ Գորիս նստավայրով:

Սպարապետին եւ նրա սյունիքյան աշխատակազմին 1993-94թթ. լրջագույն պետական առաջադրանք էր տրվել՝ պատերազմական գործողությունների թատերաբեմ դարձած Սյունիքում մեկտեղել ու կանոնակարգել ինքնապաշտպանական ջոկատների եւ նոր-նոր կազմավորվող զինված ուժերի ստորաբաժանումների ջանքերը՝ երկրի հարավարեւելյան սահմանների անվտանգությունն ապահովելու, ազատագրական պայքարի ելած Արցախին սատարելու եւ հուսալի թիկունք լինելու գործում:

1994թ. մայիսյան զինադադարից հետո էլ գլխավոր խնդիրը ոչ միայն սահմանների ամրապնդումն էր, այլեւ տնտեսության, խաղաղ, ստեղծագործ աշխատանքի վերականգնումը, պատերազմի հետեւանքների վերացումը Նյուվադիից մինչեւ Ներքին Հանդ ու Սրաշեն, մինչեւ Շուռնուխ ու Կոռնիձոր, մինչեւ Խոզնավար ու Վաղատուր:

Այդ օրերին էր, երբ սկիզբ դրվեց (տոնական մթնոլորտում) նորաստեղծ ազգային բանակը նորակոչիկներով համալրելու գործընթացին:

Ռմբակոծված ու վերքերը դեռ չբուժած Կապանում կազմակերպվեցին մշակութային եւ ռազմամարզական խաղեր՝ Վայոց ձորի, Սյունիքի եւ Արցախի թիմերի մասնակցությամբ:

Այդ օրերին էր, երբ մարզի ամառային ճամբարները (պատերազմի ժամանակ փակված) իրենց դռները բացեցին դպրոցականների առջեւ, իսկ Գորիսում ու Սիսիանում վերագործարկվեցին ֆուտբոլի խաղադաշտերը՝ յուրովի ավետելով խաղաղության հաստատումը տարածաշրջանում:

Այդ ժամանակ էր, երբ սկիզբ դրվեց Սյունիքի զարգացման ռազմավարական ծրագրի մշակմանը («Սյունիք-Զանգեզուր» ծրագիր), որին մասնակցում էին հանրապետության համապատասխան գիտական հաստատություններն ու գերատեսչությունները: Ծրագրի մշակումը, ցավոք, ավարտին չհասցվեց հասկանալի պատճառով:

Հանրապետության մասշտաբով մեծ հնչեղություն ստացան ուսանողական եւ թատերական փառատոները:

Այդ ժամանակ էր, երբ Սյունիքում փորձարկվեց տարածքային կառավարման մոդելը (շրջանային կառավարման փոխարեն), ինչը վերջնականապես ուժի մեջ մտավ 1995-ի տարեվերջին՝ հանրապետությունում իրականացված վարչատարածքային բարեփոխման շնորհիվ:

Սուրեն Աբրահամյանին էր վիճակված Սյունիքի մարզպետարանի ձեւավորումը: Առաջադրվեցին ու գործողության մեջ դրվեցին չափանիշներ ու չափորոշիչներ, որոնք հետագա տարիներին եւս մնացին պահանջված ու արդիական:

Մարզային եւ համայնքային իշխանությունների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով հիմնադրվեց տարածաշրջանային երեք լրատվամիջոց՝ թերթ, ռադիո, հեռուստատեսություն, որոնք (բացի ռադիոյից) փոփոխված կարգավիճակով գործում են մինչեւ հիմա:

1996թ. Կապանում հիմք դրվեց Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցմանը:

Մոտ քսան տարի է անցել այն ժամանակվանից, երբ Սյունիքի մարզպետ Սուրեն Աբրահամյանը նշանակվեց Երեւանի քաղաքապետ, ապա՝ ՀՀ ներքին գործերի նախարար: Եվ տարիների հեռվից, բնականաբար, ոչ միանշանակ է գնահատվել ու գնահատվում նրա սյունիքյան գործունեությունը: Բայց այդ հարցի շուրջ բանավեճը պատշաճ համարելով այլ օրերի համար, չենք կարող չարձանագրել գլխավորը՝ Սուրեն Աբրահամյանը Սյունիք եկավ եւ Սյունիքի կառավարման պատասխանատվությունը հանձն առավ մեր երկրամասի համար դժվարին ժամանակներում եւ զինվորականի ու կազմակերպչի իր առաքելությունը կատարեց նվիրումով, արժանապատվորեն, ինչի համար էլ մնայուն տեղ գտավ Սյունիքի նորագույն շրջանի պատմության, ինչպես եւ երախտապարտ սյունեցիների հիշողության մեջ:

Սյունիքում նրա հաջողության գրավականներից մեկը (հավանաբար՝ ամենակարեւորը) սյունիքյան արժեհամակարգի, սյունիքյան իրականության հետ ինտեգրվել-միաձուլվելն էր: Պատահական չէ, որ նրա կերպար-սաղարթն ամբողջացավ՝ իր վրա կրելով սյունիքյան դրոշմը, թեեւ չգիտենք՝ ինքը համաձա՞յն է այդ դիտարկմանը:

Սյունիքից տեղափոխվելուց հետո եղավ ե՛ւ իշխանության մեջ, ե՛ւ ընդդիմության փաղանգում, անցավ փորձությունների միջով, երբեմն հայտնվեց չհասկացվածի վիճակում, բայց երբեք հետ չկանգնեց իր գլխավոր հավատամքից՝ հայոց անկախ պետությունը, մեր երկրի արժանապատիվ ընթացքը, Լեռնային Ղարաբաղի ազատությունը, հայոց ազգային բանակը բացարձակ ու անսակարկելի, ոչ մի բանի հետ չնժարվող արժեք են, որոնք պահպանելու, ամրապնդելու համար անելիք ունի յուրաքանչյուր հայ մարդ:

Հենց այդ ճանապարհին է, համոզված ենք, դեռ անելիք ու ասելիք ունի Սուրեն Աբրահամյանը:

Հարգելի՛ պարոն գեներալ
Հարգելի՛ Սուրեն Ջհանգիրի

Ձեր նշանակալի հոբելյանի օրը սրտանց գնահատում ենք Ձեր վաստակը: Սյունեցին ոչ միայն իր զավակներին գնահատել ու արժանին մատուցել գիտի, այլեւ բոլոր նրանց, ովքեր երբեւէ եկել ու մասնակցել են (մասնակցում են) մեր լեռնաշխարհի ոչ դյուրին ընթացքին:

Ուրախ ենք, որ հարուստ անցյալով ու վաստակի ծանրակշիռ բեռով հանդերձ Դուք ոչ թե անցյալին եք նայում, այլ ապագային, մեր երկրի վաղվա օրվան:

Ձեզ՝ քաջառողջություն, երկար տարիների կյանք, մեր պետության հզորացմանն ակտիվ մասնակցելու կարողություն:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Կապանի համայնքապետարանում եւ նրան ենթակա կառույցներում կկրճատվի 40-50 հաստիք

Դեկտեմբերի 29-ին Կապանի համայնքապետ Աշոտ Հայրապետյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրեց 2015թ. դեկտեմբերի 1-ից 2016թ. դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում համայնքապետարանի գործունեության վերաբերյալ համառոտ հաշվետվություն:

Քաղաքի 2016թ. բյուջեով եկամուտների գծով պլանը կազմում է 1 մլրդ 296 մլն 600 հազար դրամ, որը 2015թ. համեմատ ավելի է 1.8 տոկոսով: Դեկտեմբերի 28-ի դրությամբ հավաքվել է 1 մլրդ 235 մլն 200 հազար դրամ, կամ բյուջեն կատարվել է 95.3 տոկոսով, 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 0.3 տոկոսով ավելի: 2015թ. համայնքի բյուջեն եղել է 1 մլրդ 273 մլն դրամ, հավաքվել է 1 մլրդ 256 մլն դրամ, կատարումը՝ 98.6 տոկոս: Սեփական եկամուտները 2016թ. 385 մլն 400 հազար դրամ են, դեկտեմբերի 28-ի դրությամբ հավաքվել է 324 մլն 100 հազար դրամ, կամ կատարվել է 84.1 տոկոսով, 2015թ. նույն ժամանակահատվածի դրությամբ՝ 10 տոկոսով պակաս: 2015թ. սեփական եկամուտները կազմել են 384 մլն դրամ, հավաքվել է 367 մլն դրամ, կատարվել՝ 95.5 տոկոսով:

ՀՀ 2016թ. պետբյուջեի միջոցներից որպես սուբվենցիա համայնքին տրամադրված 55 մլն դրամով՝ որպես առաջնահերթ լուծում պահանջող ծրագիր, վերանորոգվել են համայնքի Մ.Հարությունյան, Ջորք եւ Լենհանքեր թաղամասերի ճանապարհները: Բարեկարգվել են նաեւ դեպի Բաղաբուրջ (մասամբ) եւ Բեխ տանող ճանապարհները: Ավարտին է մոտենում Դավիթ Համբարձումյանի անվան մարզադպրոցի մարզադահլիճի հատակի վերանորոգման աշխատանքը, որ իրականացվում է պետբյուջեից հատկացված մոտ 40 մլն դրամով: Սկսվել են Կապանի արվեստի դպրոցի վերակառուցման աշխատանքները, ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 87 մլն 800 հազար դրամ եւ իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի եւ համայնքի 10 տոկոս համաֆինանսավորմամբ:

Ստորագրվել է համագործակցության հուշագիր «ՋիէնՍի-Ալֆա» ՓԲԸ-ի հետ, համագործակցության շրջանակներում Ռաֆայել Մինասյան փողոցի թիվ 13 եւ 14 շենքերի հարակից տարածքում կկառուցվի ապրիլյան քառօրյա պատերազմի կապանցի զոհերի հիշատակին նվիրված պուրակ: Աշխատանքների ընդհանուր արժեքը 14 մլն դրամ է, որից մոտ 2 մլն դրամը կհատկացնի «ՋիէնՍի-Ալֆա» ՓԲԸ-ն, 4.6 մլն դրամ հատկացրել է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն: Համայնքապետը նշեց, որ տեղի ընտրությունը պայմանավորված էր թե՛ բնակիչների պահանջով, թե՛ տարածքի բարեկարգման անհրաժեշտությամբ: Ի դեպ, 2017թ. նույնպես կշարունակվեն քաղաքի տարբեր թաղամասերի բարեկարգման, կանաչապատման աշխատանքները:

Աշոտ Հայրապետյանը մանրամասն ներկայացրեց նաեւ ողջ տարվա ընթացքում կատարված շինարարական, կառուցապատման, հոգեւոր-մշակութային, մարզական եւ մի շարք այլ բնագավառներում իրականացված աշխատանքներ: «Եվ, այնուամենայնիվ, կատարվածի ֆոնին ո՞րն է համայնքի համար ամենաառաջնային խնդիրը» հարցին համայնքապետը պատասխանեց՝ գործազրկության բարձր մակարդակը: Հարցի մասնակի լուծմանը, ինչպես նախկինում տեղեկացրել ենք, կնպաստեն Կապանում բացվելիք նոր ընկերությունները:

Գաղտնիք չէ, որ հանրապետությունում սկսվել է հաստիքների կրճատման գործընթաց, ինչից անմասն չի մնացել նաեւ Կապան համայնքը: Քաղաքապետի տեղեկացմամբ՝ համայնքապետարանում եւ նրան ենթակա կառույցներում կկրճատվի մոտ 40-50 հաստիք: *«Իհարկե, հասկանում ենք, որ այդ աշխատավարձով մարդիկ իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները մասամբ լուծում էին, բայց դրանք հաստիքներ են, որոնք ոչ միայն անհրաժեշտ չեն, այլեւ դրանք պահելը մեզ համար ճոխություն է»*, – մասնավորապես նշեց Ա.Հայրապետյանը:

Մանավանդ տարվա այս ժամանակահատվածում կոմունալ ծառայության համար դժվարին շրջան է սկսվում՝ կապված ձնամաքրման աշխատանքների հետ: Համայնքապետը նշեց, որ ձնամաքրման տեխնիկա ձեռք բերելու ծրագիր չկա, իսկ 2017թ. համայնքն աղբահանման նոր մեքենա կունենա: Ձնամաքրման աշխատանքների համար համայնքին աջակցում են հանքարդյունաբերական ձեռնարկությունները, որոշ տնտեսվարող սուբյեկտներ:

«Կապան» հիմնադրամը 2016թ. ունեցել է 29 մլն դրամ մուտք, գումարները ծախսվել են սոցիալական օգնությունների տրամադրման, մանկական ճամբարի եւ ուսանողական ամառ փառատոնի կազմակերպման, Բաղաբուրջի հուշահամալիրում նորոգման աշխատանքների, քանդակագործության սիմպոզիումի համար տուֆե քարերի եւ այլ պարագաների ձեռքբերման, տարբեր նորոգումների, խաղահրապարակների բարեկարգման, դրանց համար խաղասարքերի, նստարանների ձեռքբերման համար:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծննդկանն ու երեխան մահացել են, հարազատները ծեծել են բժշկին

Կիրակի՝ դեկտեմբերի 25-ին, Կապանի բժշկական կենտրոնում ծննդկանի մահվան դեպք է գրանցվել: Մինչեւ ծնվելը մահացած է եղել նաեւ պտուղը:

Բժշկական կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի վարիչ Սամվել Միկոյանից տեղեկացանք, որ 26-ամյա կինն ընդունվել է դեկտեմբերի 24-ին, ժամը 14:00-ին: Այդ ժամանակ արդեն պտուղը մահացած է եղել: *«Պտղի սրտի զարկերը չենք զգացել, ուզարկել ենք «էխոյի», էխոսկոպիստը հաստատել է մեր ախտորոշումը՝ 37-38 շաբաթական մահացած պտուղ»*, - ասաց Սամվել Միկոյանը:

Բժշկի փոխանցմամբ, մահացած պտուղները շատ վտանգավոր են եւ բերում են ներանոթային մակարդելիության սիստեմի խանգարման: Եղանակային այս պայմաններում, 350 կմ ճանապարհ կտրելով, կնոջը երեւան տեղափոխելը բժիշկները գնահատել են ռիսկային եւ որոշում է ընդունվել նրան հոսպիտալացնել: Հետագայում զարգացել է ծննդաբերական գործունեություն: Դեկտեմբերի 25-ին՝ ժամը 4:40-ին, ծնվել է մահացած երեխան: Այնուհետեւ բժիշկները նկատել են, որ արյան մակարդում բացարձակ տեղի չի ունենում:

«Մենք, մինչեւ ծննդաբերությունը այդ խնդիրը կանխատեսելով, պրոֆիլակտիկ նշանակումներ ենք արել, որ մակարդելիության սիստեմը մի քիչ բարելավվի: Հեղուկներ ենք ներարկել, ամեն ինչ արել ենք, բայց բժշկությունն այսօր ի զորու չէ, որ բոլոր խնդիրները 100 տոկոսով հաղթահարի: Ծննդաբերությունից հետո նույնպես արյան մակարդելիության սիստեմը կարգավորող դեղորայքներ ենք նշանակել, պլազմա ենք արել, որը պատվիրում ենք Գորիսից, մորից ենք փոխներարկել եւ այլն», – մանրամասնեց բաժանմունքի վարիչը: Տեսնելով, որ կոնսերվատիվ՝ դեղորայքային մեթոդներն արդյունք չեն տալիս, որոշում է ընդունվել վիրահատել կնոջը: Բժիշկ Միկոյանի խոսքով, սկզբում վիրահատությունից փորձել են հնարավորինս խուսափել՝ հաշվի առնելով, որ դա եղել է կնոջ առաջին հղիությունը եւ նպատակ են ունեցել պահպանել արգանդը՝ մայրանալու հնարավորությունից հետագայում նրան չզրկելու համար:

«Ուղղակի 26 տարեկան կին էր, զրկվել էր երեխայից, եթե մենք շուտ գնայինք վիրահատության, արգանդն անպայման պետք է հեռացնեինք, դրա համար չարչարվեցինք, որպեսզի գոնե արգանդը պահպանենք: Բայց, էլի եմ ասում, մենք փրկիչներ չենք: Ինչ որ արել ենք, օգուտ չի տվել: Հետագայում տեսնելով, որ դեղորայքային միջոցն արդյունք չի տալիս, գնացել ենք վիրահատության: Վիրահատությունը դեռ չվերջացած, սրտի կանգ է տեղի ունեցել, որը վերականգնել հնարավոր չի եղել: Թե հետագայում դատաբժշկությունը ինչ եզրակացություն կտա, ես ինչ կարող եմ ասել», – նշեց Կապանի բժշկական կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի վարիչը:

Հարցին, թե հնարավոր կլինե՞ր փրկել կնոջ կյանքը, եթե շուտ դիմեին վիրահատական միջամտության՝ չփորձելով պահպանել արգանդը, բժիշկը պատասխանեց.

«Գիտեք ինչ կա, նա ծննդաբերությունից հետո նորմալ քանակով արյուն է կորցրել: Եթե դա կազմում է քաշի համեմատությամբ 0.5 տոկոս, համարվում է թույլատրելի արյան կորուստ: Իր մոտ թույլատրելի արյան կորստից էլ ցածր է եղել: Եթե մենք գնայինք վիրահատության, կարող է ավելի շատ կորցներ եւ այս երեւույթներն ավելի շուտ զարգանային, դարձյալ չկարողանայինք փրկել կնոջ կյանքը»:

Կինը մինչեւ ծննդաբերելն իմացել է, որ արգանդում աղջնակն արդեն մահացած է: Բայց թե ինչ պատճառով դա կարող էր տեղի ունենալ, հայտնի չէ: Սամվել Միկոյանը նշում է, նման դեպքերին հատուկ մի շարք պատճառներ, ինչպես օրինակ, արյան բացասական ռեզուս, պորտալարի փաթաթում, այս պարագայում չեն եղել: *«Այստեղ գուցե հավանական է զույգերի միջեւ անհամատեղելիություն, որ 37-38 շաբաթականում հանկարծ ներարգանդային մահ է տեղի ունենում: Պտուղը մենք ուղարկել ենք քննության: Դատաբժիշկները կպարզեն՝ ինչն է պատճառը»*, – ասաց նա: Հղիության ընթացքը, ինչպես փոխանցել են Միկոյանին, չի ուղեկցվել բարդություններով:

Մահացած ծննդկանի ու երեխայի հարազատները համոզված են, որ իրենց ընտանիքին պատուհասած այս մեծ ողբերգությունը բժիշկների մեղքով է: Նրանք փորձել են վրեժխնդիր լինել:

«Մենք՝ հայերս, սիրում ենք բռունցքներով հարցեր լուծել: Ոչ մի քաղաքակիրթ երկրում այսպիսի բան չի լինի, որ բժիշկն այսքան անպաշտպան լինի: Բոլոր նորմալ հիմնարկներում անվտանգության աշխատակիցներ կան: Երեւանի համարյա բոլոր բուժհիմնարկներում նույնպես անվտանգության աշխատակիցներ են նստած: Իսկ մեզ մոտ ինքնադատաստան են տեսնում: 20 հոգի դուռը բացեցին, թափվեցին վրաս, սկսեցին բռունցքներով, քացիներով խփել: Իրավունք չունենք բռունցքով մեր հարցերը լուծել, հասկանո՞ւմ եք: Մտածում են, որ մահ է եղել, ուրեմն բժիշկը մեղավոր է: Բայց բժշկությունը հարյուր տոկոսանոց չէ», – ասաց մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի ղեկավար Սամվել Միկոյանը:

Հ.Գ. Կապանի բժշկական կենտրոնում տեղի ունեցածի վերաբերյալ երեկ հաղորդագրություն է տարածել ՀՀ քննչական կոմիտեն: Ըստ այդմ, Սյունիքի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ծննդկանի մահվան դեպքի առթիվ: 2016թ. դեկտեմբերի 25-ին՝ ժամը 14:20-ին, Կապանի բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվել, որ ընկերության մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքում գրանցվել է նորածնի, այնուհետեւ վերջինիս մոր՝ 1990 թ. ծնված Մարինե Իվանյանի մահը: Նախնական տվյալներով՝ Մարինե Իվանյանը 2016 թ. դեկտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին, «մահացած պտուղ» ախտորոշմամբ ընդունվել է «Կապանի ԲԿ» ՓԲԸ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք, որտեղ 2016թ. դեկտեմբերի 25-ին՝ ժամը 11:30-ին, ծնվել է մահացած պտուղը, որին հաջորդել է բուժվող հիվանդ Մարինե Վարդանի Իվանյանի մահը:

Սյունիքի մարզային քննչական վարչությունում դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով («Բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը»): Նշանակվել են մահացած պտղի եւ Մ. Իվանյանի դիակի դատաբժշկական փորձաքննություններ: Ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ դեպքի բոլոր հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ եւ լրիվ հետազոտումն ապահովելու ուղղությամբ:

Աննա Զախարյան
26.12.2016
armtimes.com

Հ.Գ. 2016թ. հանրապետությունում գրանցվել է մայրական մահացության 12 դեպք:

Սյունիքում ծնվածների թիվը տարեկան նվազել է 171-ով

Սյունիքի մարզում տեղի են ունենում ժողովրդագրական բացասական փոփոխություններ. 2016թ. մարզում գրանցվել է 1334 ծնունդ՝ 2014թ. գրանցված 1505 ծննդի փոխարեն: Ծնունդների նվազումը նկատելի է հատկապես Կապանի տարածաշրջանում:

2016 թվականին Կապանի բժշկական կենտրոնում գրանցվել է 455, Գորիսի բժշկական կենտրոնում՝ 556, Սիսիանի բժշկական կենտրոնում՝ 210, Մեղրու բժշկական կենտրոնում՝ 68, Քաջարանի բժշկական կենտրոնում՝ 45 ծնունդ:

2016թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզի բնակչության թիվը կազմել է 139,3 հազ. մարդ, որից քաղաքային՝ 94,0 հազար, գյուղական՝ 45,3 հազար:

2004-ին մարզի բնակչությունը 150,6 հազար մարդ էր, այդ թվում՝ քաղաքային՝ 102,5 հազար, գյուղական՝ 48,1 հազար:

Սեփ. լրատվություն

Մարզխորհրդի փարեվերջյան նիստը

Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետթատրոնի դահլիճում դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ մարզխորհրդի տարեվերջյան նիստը, որին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի տեղակալ Արթուր Խաչատրյանը, քաղաքային եւ գյուղական համայնքների ներկայացուցիչներ, կրթության ոլորտի պատասխանատուներ, իրավապահ մարմինների ղեկավարներ: Նիստի օրակարգը ներառում էր հինգ հարց:

Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ Արշավիր Գեւորգյանը ներկայացրեց մարզի օպերատիվ իրավիճակը, հանցագործությունների բացահայտման դինամիկան: Մարզում 593 հանցագործության դեպք է արձանագրվել, ավելի քան նախորդ տարի: Բացահայտվել է դրանց 80 տոկոսը:

Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքման ընթացքի եւ այդ գործում առկա խնդիրներին էր նվիրված Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Սուսաննա Դավթյանի զեկուցումը, իսկ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի պետ Էդգար Մարտիրոսյանն իր խոսքում անդրադարձավ մարզի 2017-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության եւ համայնքների հնգամյա զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներին:

Նոյեմբերի 6-ից 26-ը մարզի քաղաքային եւ գյուղական խոշոր համայնքների դպրոցներում՝ Կապանում եւ Քաջարանում՝ ութ, Գորիսի տարածաշրջանում՝ յոթ, Սիսիանի տարածաշրջանում՝ հինգ, գյուղական դպրոցներից՝ Շինուհայր, Խնձորեսկ, Վերիշեն, Անգեղակոթ, կրթության եւ գիտության նախարարության կողմից անցկացվել են տեսչական ստուգումներ: Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանն ամփոփ տեղեկատվություն ներկայացրեց տեսչական ստուգումների մասին: Բանախոսի ելույթից հետո ոլորտին առնչվող հարցեր հնչեցին: Սյունիք գյուղական համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը բարձրաձայնեց դպրոցի անմխիթար վիճակի մասին, ինչը ներկայացրեց ավելի քան մռայլ գույներով. եթե երկրաշարժ լինի, դպրոցում եղողները մնալու են փլատակների տակ:

Մարզի համայնքներում հողօգտագործման իրավիճակի, իրականացված հողային պետական տեսչական ստուգումների արդյունքներին եւ հետագա անելիքներին էր նվիրված մարզպետարանի աշխատակազմի հողաշինության եւ հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մուշեղ Կոստանդյանի զեկուցումը:

Ամփոփելով մարզխորհրդի նիստի արդյունքները՝ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը հայտնեց, որ կառավարության որոշմամբ ստեղծվել է մարզի զարգացման եւ ներդրումների հիմնադրամ, որի միջոցները գոյանում են գործընկերների, բարերարների, գործարարների նվիրատվություններից եւ ծառայեցվելու են բացառապես Սյունիքի զարգացմանը: Վերջին երկուսուկես ամսում 105 մլն դրամ ուղղվել է շինարարական աշխատանքներ իրականացնելուն. ավարտվել է Քաջարանի թիվ 2 եւ Դաստակերտի դպրոցների տանիքների նորոգումը, Լեռնաձոր համայնքի կոյուղու նորոգումը եւ այլն: «Չկան չլուծվող հարցեր», - ասաց մարզպետը եւ ներկաներին հորդորեց հետամուտ լինել իրենց առջեւ դրված խնդիրների կատարմանը, ինչպես նաեւ նիստի մասնակիցներին շնորհավորեց Ամանորի եւ Սուրբ ծննդի կապակցությամբ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ.
«Արտակարգ իրավիճակների համակարգում աշխատում են անձինք, ովքեր իսկապես սիրում են մեր հայրենիքը, Սյունյաց աշխարհը եւ արժանավոր հայ են...»

էջ 2

վածի գործարկումից հետո հեռախոսի էկրանին է հայտնվում «ՍՕՍ» սեղմակոճակը, որի կենտրոնին հպվելով 3-4 վայրկյան՝ ինքնաշխատ սկզբունքով ահազանգը հասցեագրվում է «911» ծառայության համապատասխան ստորաբաժանում: Ահազանգը սպասարկող աշխատակիցը քարտեզի վրա տեսնում է ահազանգողի գտնվելու վայրը (կոորդինատները) եւ նախօրոք լրացրած տվյալներն ու տեղեկատվությունը՝ կազմակերպելով օպերատիվ եւ արդյունավետ արձագանքում: Հավելվածի միջոցով հնարավոր է կապ հաստատել օպերատիվ այլ ծառայությունների հետ, հաղորդագրություններ ուղարկել հարազատներին եւ ընկերներին, տարաբնույթ տեղեկատվություն ստանալ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից, գտնել առաջին անհրաժեշտության մոտակա կարեւոր օբյեկտները:

Այս տարի մեր աշխատակիցներն անցել են նաեւ համապատասխան ատեստացիա՝ ստուգելով իրենց տեսական եւ գործնական գիտելիքները:

– Եթե համեմատենք 2015թ. հետ, հատկապես ո՞ր տիպի պատահարներն են մարզում շատացել:

– Ընդհանուր առմամբ արտակարգ իրավիճակների թիվը նախորդ տարիների համեմատ ոչ միայն հանրապետությունում, այլեւ մարզում ավելացել է, բայց դա նախեւառաջ պայմանավորված է նրանով, որ բնակիչների դիմելիությունն է աճել, վստահությունը 911 ծառայության հանդեպ՝ բարձրացել: Պատահարների հետեւանքով մահացության թիվը միանշանակ պակասել է, զոհերը հիմնականում ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով են գրանցվել՝ պայմանավորված արագության գերազանցմամբ: 2016թ. մարզում գրանցվել է 619 արտակարգ դեպք (2015թ.՝ 737), որոնց հետեւանքով զոհվել է 29 (2015թ.՝ 33 մարդ), մարմնական վնասվածքներ ստացել (վիրավորվել) 136 մարդ (2015՝ 129), օգնություն է ցուցաբերվել 3319 մարդու: Այսպիսով՝ 2016թ. ընթացքում արտակարգ իրավիճակների դեպքերը մարզում պակասել են 118-ով կամ 16%, զոհերի թիվը պակասել է 4, վիրավորների թիվը՝ 7-ով:

– Վարչության համար 2016թ. ամենակրիտիկական վիճակը:

– Ամենակրիտիկական վիճակը եղել է հուլիսի 4-ին Կապանում տեղի ունեցած ավտովթարի ժամանակ, որի հետեւանքով վեց զոհ ենք ունեցել:

– Գրեթե ամեն օր աշխարհի մասշտաբով ականատես ենք լինում տարբեր արտակարգ իրավիճակների, որոնց վերացումը հնարավոր չէ պատկերացնել առանց ժամանակակից տեխնիկայի: Ի՞նչ աշխատանքներ են իրականացվում տեխնիկայի արդիականացման ուղղությամբ:

– Անցնող տարում ձեռք ենք բերել նորագույն փրկարարական գործիքներ, թարմացվել է մեքենայական հավաքակայանը: Դեռեւս 2016թ. սկզբից մեկնարկել է տեխնիկայի արդիականացման ծրագիր, որի երկու փուլն արդեն ավարտվել է, իսկ 2017թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նախատեսվում է ծրագրի ամբողջական ավարտը: Արդյունքում մարզի փրկարարական վարչությունը կհամալրվի 11-12 նոր հրշեջ-փրկարարական մեքենայով՝ ճապոնական արտադրության: Հայ-ճապոնական համագործակցության շրջանակներում իրականացվող այս ծրագիրն անձամբ ղեկավարում էր երջանկահիշատակ նախարար Արմեն Երիցյանը: Կապանում կունենանք նաեւ մեկ ավտոսանդուղք՝ նախատեսված մինչեւ 15 հարկանի շենքի համար: Ի դեպ, ծրագիրը գործում է Սյունիքի, Լոռու եւ Տավուշի մարզերում: Երբեմն քաղաքացիները, հոգեբանական վիճակով պայմանավորված, կարող են դժգոհել, թե ահազանգի դեպքում ուշ ենք հասնում դեպքի վայր, բայց երբ բացատրում ենք, որ հնամաշ տեխնիկան է նաեւ ուշացման պատճառը, նրանք ըմբռնումով են մոտենում: Համոզված եմ՝ տեխնիկայի ամբողջական թարմացումը կնպաստի առավել արագ արձագանքմանը:

Շնորհակալություն եմ հայտնում նաեւ մարզպետ Վահե Հակոբյանին՝ վարչության շենքի գազիֆիկացման աջակցության համար, ինչը կարեւոր հիմնախնդրի լուծում էր:

– Թվարկեք 2017թ. վարչության առաջ ծառացած մեկ-երկու հիմնախնդիր:

– Նախ՝ նշեմ, որ արտակարգ իրավիճակների նախարարության համար բոլոր խնդիրներն էլ առաջնային են: Արտակարգ իրավիճակների ժամանակ մարդկանց կյանքի եւ առողջության փրկումն ու պահպանումը, փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական եւ հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, քաղաքացիական պաշտպանության եւ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմնահարցերով պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության կազմակերպումը եւ մի շարք այլ միջոցառումներ եղել եւ մնում են վարչության հիմնական խնդիրները: Նախատեսվում է մարզում տեղադրել շչակներ, բարձրախոսներ, որոնց միջոցով լայնամասշտաբ արտակարգ իրավիճակների դեպքում կիրազեկվի բնակչությունը: Կապան քաղաքում եւ Սյունիք համայնքում շչակները տեղադրվել են, մարզպետի եւ փոխնախարարի հետ պայմանավորվածություն ունենք, որ նախեւառաջ մարզի սահմանամերձ համայնքներում հնարավորինս կարճ ժամանակահատվածում կտեղադրվեն շչակներ: Օրենքի նախագիծ է պատրաստվում նաեւ, համաձայն որի՝ տարբեր ազդանշաններով բնակչությունը կտեղեկացվի տարերային աղետների մասին:

– Ապրիլյան պատերազմի օրերին առաջնային դարձավ նաեւ քաղաքացիական պաշտպանության կազմակերպման հարցը:

– Վարչությունն ունի քաղաքացիական պաշտպանության բաժին, որն իրականացնում է իր վրա դրված պարտականությունները: Օրենքի համաձայն՝ արտակարգ իրավիճակի դեպքում յուրաքանչյուր համայնքի քաղպաշտպանության պետը տվյալ համայնքի ղեկավարն է, իսկ շտաբի պետը՝ նրա կողմից լիազորված անձը, իսկ մարզում քաղպաշտպանության պետը մարզպետն է, շտաբի պետը՝ փրկարարական վարչության պետը: Ապրիլյան պատերազմի առաջին իսկ վայրկյանից համապատասխան հանձնարարականներ ենք ստացել բնակչությանն իրազեկելու եւ նրանց պաշտպանությունը կազմակերպելու վերաբերյալ: Յուրաքանչյուր համայնքի ղեկավար պատշաճ մակարդակով կազմակերպել է այդ աշխատանքները: Առհասարակ քաղպաշտպանությունն ամենօրյա աշխատանք է պահանջում:

– Կադրերի պակաս կամ կրճատման խնդիր ունե՞ք:

– Այս պահին կադրերի պակաս չունենք, կրճատման հանձնարարական չենք ստացել: Իմ կարծիքով՝ մեզ մոտ կրճատման խնդիր չի կարող լինել, քանի որ մեր աշխատանքներն առանց այն էլ ծավալուն են, եւ աշխատուժի կրճատումն արդեն իսկ կբերի աշխատանքի որակի իջեցման: Շատ քաղաքացիներ են դիմում աշխատանքի տեղավորման հարցով, բայց հաստիքների բացակայության պատճառով հնարավոր չէ բավարարել նրանց պահանջը: Ապրիլյան պատերազմից հետո աշխատանքի ենք ընդունել, իհարկե վերադասի իմացությամբ եւ կարգադրությամբ, պատերազմի չորս մասնակցի, ովքեր այսօր մեր կոլեկտիվի լիիրավ անդամ են: Իմ կարծիքով՝ արտակարգ իրավիճակների համակարգում աշխատում են անձինք, ովքեր իսկապես սիրում են մեր հայրենիքը, Սյունյաց աշխարհը եւ արժանավոր հայ են… Յուրաքանչյուր փրկարար հասարակության շրջանում պետք է առանձնանա իր գաղափարով, մտածելակերպով եւ պահվածքով, այսինքն՝ հոգովսրտով փրկարար լինի:

– Ցավոք, մարզում ջրահեղձման դեպքեր էլ են գրանցվել, եւ եղել է դեպք, որ այլ վայրից ենք ջրասուզակներ հրավիրել՝ համապատասխան օգնություն ցուցաբերելու համար:

– Այս պահի դրությամբ Սիսիանում ունենք չորս ջրասուզակ, ովքեր անցել են համապատասխան մասնագիտական վերապատրաստում, ապահովված են հանդերձանքով: Պարզապես պետք է հաշվի առնենք մի հանգամանք. ջրասուզակների հանդերձանքը նախատեսված է տարբեր խորությունների համար, մեր ունեցած հանդերձանքը նախատեսված է մինչեւ 50մ խորության համար: Եթե տեղական ուժերով չենք կարողանում օգնություն ցուցաբերել, դիմում ենք Սեւանի ջրասուզակներին, քանի որ նրանք ունեն նաեւ մեծ փորձ: Բացի դրանից՝ պետք է հաշվի առնենք նաեւ, որ մարդու ֆիզիկական վիճակը թույլ չի տալիս ժամերով աշխատել ջրում, ուստի լրացուցիչ ուժը չի խանգարում:

– Տոների առթիվ Ձեր շնորհավորանքը:

– Իմ եւ կոլեկտիվիս անունից շնորհավորում եմ ողջ հայ ժողովրդին Ամանորի եւ Սուրբ ծննդի առթիվ, մաղթում խաղաղության տարի: Թող մեզնից յուրաքանչյուրը 2017թ. լինի առավել հայրենասեր, ընտանիքին նվիրված, կատարի մեր երկրի բարգավաճմանը նպաստող քայլեր: Բոլորին մաղթում եմ առողջություն, հայ զինվորին, հրամանատարին՝ աչալրջություն, զգոնություն, անփորձանք ծառայություն. թող միշտ հիշեն, որ փրկարարները մշտապես պատրաստ են կանգնել սահմանը պահողների թիկունքին:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ. «Այսօր իմ հոգան ընտանիքիս բարօրությունն է, մտահոգությունս՝ ազգիս վիճակը»

էջ 3

լոր դժվարություններից, բնակչության խառնվածքի տարբերություններից, ես այդ լեռնցի ժողովրդին սիրեցի ու նվիրվեցի:

– Որո՞նք էին պաշտոնը ստանձնելիս Ձեր առջեւ ծառացած առաջնային խնդիրները. չէ՞ որ մարզպետական ինստիտուտը նոր էր ձեւավորվում:

– Խոստովանեմ, որ բավականին ծանր ու դժվար աշխատանք էր, ինձ կառավարությունից մեկ թուղթ էին տվել, որ ես Սյունիքի մարզպետն եմ եւ գործուղել Կապան, ո՛չ նստավայր, ո՛չ աշխատատեղ, ո՛չ ֆինանսական հնարավորություններ: Բախտս բերեց նրանով, որ մինչ այդ աշխատել էի մարզում եւ ամբողջությամբ տեղյակ էի այնտեղ տիրող իրավիճակից: Չափազանց կարեւոր էր նաեւ լավ աշխատակազմ ձեւավորելը՝ խելամիտ նշանակումներ անելով. տեղակալ նշանակեցի Դավիթ Մաթեւոսյանին, իսկ աշխատակազմի քարտուղար՝ Սուսաննա Սարգսյանին, կադրերի համահավասար տեղաբաշխումներ կատարեցի եւ այլն: Մի խոսքով՝ աշխատակազմում ներգրավեցի մարդկանց, ովքեր գիտակցում էին մարզի համաչափ զարգացման անհրաժեշտությունը: Իմ ամենաառաջնային խնդիրը բնակչությանը մարզպետարանի տեղը ցույց տալն էր, իսկ կառույցի հանդեպ հավատը պայմանավորվում է նախեւառաջ մարզպետի կերպարով, եւ մենք մեր տեղը ցույց տալու հարցը շատ շուտ լուծեցինք:

– Թվարկեք, խնդրեմ, մարզում կատարված այն կարեւոր իրադարձությունները, որոնք նշանակալից են Ձեզ համար:

– Անկեղծ ասած ոչ մի պարագայում չեմ սիրել կուրծք ծեծել, իմ գործն եմ արել. ինչո՞ւ եմ դա ասում, որովհետեւ յուրաքանչյուր ղեկավար իր գործունեությամբ նախեւառաջ բնակչության կենսամակարդակը պետք է բարձրացնի, նրանց ժպիտ պարգեւի մանավանդ հետպատերազմական շրջանում եւ դրանից հետո: Եվ զզվելի է այն չինովնիկը կամ մեծահարուստը, ով որեւէ աշխատանք իրականացնում է հանրության ի ցույց դնելու համար:

Իհարկե, շատ աշխատանքներ են իրականացվել մարզում իմ պաշտոնավարման ընթացքում, բայց կկարեւորեմ հատկապես Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գմբեթի վերանորոգումը, Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հիմնարկեքը… Այսօրվա պես հիշում եմ այն ոգեւորությունը, երբ 100 տարվա ընդմիջումից հետո Կապանում ոտք դրեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը՝ մասնակցելու Կապանի եկեղեցու հիմնարկեքին:

– Կապանի մարզադաշտի սեփականաշնորհման հետ կապված երբեմն նաեւ Ձեզ են մեղադրում:

– Սուրեն Աբրահամյանը Կապանի մարզադաշտի սեփականաշնորհման հետ որեւէ առնչություն չունի, այդ գործընթացն իմ՝ մարզպետի պաշտոնից ազատվելուց հետո է եղել: Ավելին ասեմ՝ մարզպետ նշանակվելուց հետո Գորիսի, Սիսիանի, Կապանի մարզադաշտերում հնարավորության սահմաններում վերանորոգման աշխատանքներ կատարեցի, այնտեղ արդեն խաղեր էին անցկացվում: Նույնիսկ Կապանի մարզադաշտում անցկացրինք մշակութային եւ ռազմամարզական խաղերի հայտնի փառատոնը, որ մի հրաշալի իրադարձություն էր:

– Սպարապետ Վազգեն Սարգսյանի հետ ունեցած հարաբերությունների մասին…

– Բացառիկ ջերմ, մտերմիկ հարաբերություններ ենք ունեցել Սպարապետի հետ: Փոխադարձաբար իրարից սովորել, իրար հետ վիճել, անքուն եւ ծանր գիշերներ անցկացրել… Շնորհակալ եմ Աստծուն, նախախնամությանը, ճակատագրիս. մխիթարվում եմ, որ նման հզոր, փայլուն եւ առաքինի անձնավորության հետ եմ աշխատել, բարեկամացել: Համոզված եմ՝ հարյուր տարին մեկ են նման անհատականություններ ծնվում, մեկ մարմնի մեջ այդքա՜ն էներգիա, սեր, նվիրում հայրենիքի հանդեպ: Նա բնության մի փոքրիկ պատառն է, որոնց շնորհիվ են միայն ու միայն կերտվում հաղթանակները. դասական գեներալով, զինվորականով նման հաղթանակ չես կարող կերտել: Սպարապետ Վազգեն Սարգսյանը դարձավ մեր ազգի հավաքական կերպարը:

– Համառոտ ներկայացրեք «Սյունիք-Զանգեզուր» պետական ծրագրի մասին:

– «Սյունիք-Զանգեզուր» ծրագրի շուրջ աշխատում էին Գիտությունների ազգային ակադեմիայի տարբեր ինստիտուտներ, համապատասխան գերատեսչություններ: Իրականում այն բավականին լուրջ նախաձեռնություն էր, որին Սյունիքի գծով պետնախարար Վազգեն Սարգսյանը մեծ նշանակություն էր տալիս: Առհասարակ այն ժամանակ Հայաստանի զարգացման գլխավոր ուղղություններն էին գյուղատնտեսությունը, լեռնամետալուրգիան, որի հիմքը Սյունիքում պետք է դրվեր, եւ քաղաքաշինությունը՝ հիմնականում Երեւանում: Բնականաբար, ծրագրում հանքարդյունաբերության զարգացման համար առանձին բաժին կար: Այդ նպատակով Քաջարանի կոմբինատի ղեկավար Ռոման Նավասարդյանի մտահղացմամբ մոտ 450 մլն դոլար արժողությամբ ծրագրի շրջանակներում բանակցություններ էինք սկսել շահագրգիռ անձանց հետ. Ֆերրոմոլիբդենի կոմբինատ պետք է բացվեր, որ գերշահույթով աշխատող ձեռնարկություն կլիներ: Բիզնես պլան կազմվեց, առաջին տրանշը փոխանցվեց՝ 25 մլն դոլար, բայց ինչ-ինչ խնդիրներով պայմանավորված՝ հետագայում խափանվեց այդ ծրագիրը: Իրականում այն բավականին լուրջ առաջընթաց կապահովեր մարզում, նախատեսվում էր 21 օժանդակ ձեռնարկություն ստեղծել՝ ներառելով դրանք մարզի տարբեր բնակավայրերում, ապահովելով համաչափ զարգացումը: Դա երազ չէր, բարի ցանկություն չէր, այլ իրական ծրագիր, որն այդպես էլ մնաց թղթին:

– Նշեցիք, որ սյունեցիներին սիրեցիք եւ ամբողջովին նվիրվեցիք նրանց, այնուամենայնիվ, բնութագրեք Ձեր վերաբերմունքը նրանց հանդեպ:

– Գիտեք՝ այս մարզի համայնքների բնակիչները մեկը մյուսից տարբերվում են թե՛ մտածելակերպով, թե՛ կենցաղով, թե՛ հոգեբանությամբ: Սիսիանցիներն իրենց լեռների պես պինդ են, նրանք ոչ մի հարցի իմիջիայլոց չեն վերաբերվում, Գորիսը, ինչպես միշտ եմ ասել, Հայաստանի Չեչնիան է, գորիսեցիները հանդուգն են, իրենց ասածի տերը, չնայած վերջին ժամանակներս կարծեք խեղճացել են (սա կարող է եւ իմ սուբյեկտիվ կարծիքն է), կապանցին առանձնանում է կայացած քաղաքացու կերպարով, մեղրեցին՝ իր մեղմաբարո բնավորությամբ, ինտելեկտով, կուլտուրայով, քաջարանցին, որ ի տարբերություն մյուսների, սոցիալական վիճակով ավելի ապահով վիճակում է, աշխատասեր է, իր եկամուտի տերը: Անկեղծ եմ ասում՝ բոլորի հետ նորմալ հարաբերություններ եմ ունեցել, առաջնորդվել միայն պետական շահով, փորձել հնարավորության սահմաններում թեթեւացնել նրանց հոգսը: Սյունիքում աշխատելուս տարիներին ոչ մի բանի վրա աչք չեմ դրել, դիմացել բոլոր գայթակղություններին (խմբ.՝ ժպտում է):

– Դուք նույնպես կարծո՞ւմ եք, որ Սյունիքի հանդեպ պետական առանձնահատուկ վերաբերմունք պետք է ցուցաբերվի:

– Ես ոչ միայն կարծում եմ, այլեւ համոզված եմ՝ Սյունիքի հանդեպ պետական առանձնահատուկ մոտեցում պետք է ցուցաբերվի, եւ դա ժամանակին գիտակցել են շատ քաղաքական այրեր: Նույնիսկ այն կարծիքին եմ, որ Սյունիքի մարզպետին փոխվարչապետի կարգավիճակ պետք է շնորհեն, որով կկարեւորվի մարզի նշանակությունը: Աստված մի արասցե, պատերազմական լայնամասշտաբ գործողությունների վերսկսման դեպքում Սյունիքը, բացի իրեն պաշտպանելուց, նաեւ Ղարաբաղին թիկունք պետք է լինի: Ավելին ասեմ՝ այստեղ պատահական նշանակումներ չպետք է լինեն, այլ ղեկավար պետք է նշանակվի պետական մտածելակերպով, լայն մտահորիզոնով օժտված անկեղծ հայրենասերը:

– Երբեմն հանրության շրջանում հաճախ ենք լսում, որ ասում են՝ Սյունիքի մարզպետ պետք է նշանակեն միայն ծագումով սյունեցու. արդյո՞ք դա արդյունավետ կառավարման համար կարեւոր նախապայման է:

– Համենայն դեպս պետական մտածողության առումով դա չափանիշ չէ, մոտեցում չէ: Քարանձավային հայրենասիրությունն ինձ համար անընդունելի է: Որպես առաջին մարզպետ եւ ծագումով ոչ սյունեցի՝ վստահաբար կարող եմ ասել, որ ինձ համար ամենամեծ չափանիշը մարդու կերպարի, նրա աշխատանքի գնահատման առումով հասարակական կարծիքն ու ժողովրդի վերաբերմունքն են, իսկ Սյունիքում ինձ ու իմ գործելակերպն ընդունեցին: Իհարկե, կան հակասական կարծիքներ, բայց ես բոլոր հարցերի պատասխաններն ունեմ:

– Սյունիքի մարզպետի պաշտոնից հետո նշանակվեցիք Երեւանի քաղաքապետ, ներքին գործերի նախարար…

– Երեւի թե երբեւիցե իմ զբաղեցրած պաշտոններից ամենածանրը Երեւանի քաղաքապետ լինելն էր: Հանրապետության՝ տարբեր առումներով պոտենցիալի կեսից ավելին այստեղ էր կենտրոնացել, բայց քաղաքապետը շատ լիազորություններ չուներ, իսկ քաղաքապետարանի բյուջեն սուղ էր: Հոգսերը շատ էին, բայց հավատը, ոգեւորությունն էին մեծ: Այն ժամանակվա ղեկավարության աջակցությամբ շատ խնդիրներ լուծեցինք. յուրահատուկ սիրեցի Երեւանը եւ սրտանց նվիրվեցի այդ աշխատանքին՝ ձեւավորելով լավ կոլեկտիվ ու աշխատելաոճ:

Այնուհետեւ նշանակեցին ներքին գործերի նախարար. ի դեպ, այդ պաշտոնը ստանձնելու առաջարկությունը մինչ այդ մի քանի անգամ մերժել էի:

– Կարծեմ թե վերոնշյալ պաշտոնում կարճ աշխատեցիք:

– Ընդամենը երեք ամիս. 1999թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցած այդ չարաբաստիկ դեպքերը ոչ միայն երկրի, այլեւ իմ կյանքում շրջադարձային եղան: Անմիջապես հրաժարական տվեցի, որովհետեւ երկիրը գոյատեւում է ոչ միայն օրենքներով, այլեւ համակեցության կանոններով ու բարոյական նորմերով, որոնցով էլ ամրապնդվում է երկրի հիմքը: Պաշտոնը միայն վայելելու համար չէ, այն նախեւառաջ բարոյական պատասխանատվություն է, այնուհետեւ՝ իրավական: Իմ անձնական որոշմամբ հրաժարվեցի ներքին գործերի նախարարի պաշտոնից, որ շատ ճիշտ քայլ էր:

– Քաղաքական ասպարեզից դուրս նաեւ զբաղեցրել եք Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոնը:

– Մարզաձեւերից հատկապես ֆուտբոլ շատ եմ սիրել եւ պատահական տարբեր թիմերում մարզվել: Հիշում եմ՝ պատերազմի տարիներին Վազգեն Սարգսյանի հետ ազատ ժամանակ ֆուտբոլ էինք խաղում: Երբ դեռ Սյունիքում էի, նա ինձ առաջարկեց ստանձնել ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոնը, բայց այն ժամանակ նպատակահարմար չէր, իսկ Երեւանի քաղաքապետ նշանակվելուց հետո համաձայնեցի: Հայաստանում ֆուտբոլի վիճակն այնքան էլ ոգեւորիչ չէր. նորմալ մարզադաշտ չունեինք, համակարգը ձեւավորված չէր, ֆինանսական միջոցներ չկային… Հանրապետական մարզադաշտում հիմքային աշխատանքներ կատարեցինք տարբեր մարդկանց օժանդակությամբ, որովհետեւ պետական միջոցներ չկային: Հիշում եմ՝ ես ու Վազգենը կանգնել էինք մարզադաշտի վերեւում, ասաց՝ պետք է սարքենք այն, ասացի՝ բայց միջոցներ չկան, ասաց՝ թիկունք թիկունքի տալով կանենք: Լավից-վատից վերանորոգեցինք մարզադաշտը, եւ իմ որոշմամբ այն կոչվեց Վազգեն Սարգսյանի անվամբ: Գյումրու մարզադաշտը եւս վերանորոգեցինք, եւ այն հանրապետությունում առաջինը ճանաչվեց ՈՒԵՖԱ-ի պահանջներին համապատասխան: Մի խոսքով՝ չորս տարի ղեկավարելով ֆեդերացիան՝ հնարավորության սահմաններում համակարգում բավականաչափ աշխատանքներ իրականացրի:

– Ձեր կյանքի ո՞ր շրջանի համար եք զղջացել:

– Անկեղծ ասած կյանքիս քաղաքական եւ ոչ մի շրջանի համար երբեք չեմ զղջացել: Միգուցե կենցաղային մանր-մունր հարցեր կային, որոնց համար ափսոսացել եմ: Չեմ ափսոսում, որ չունեմ գործարան, ֆաբրիկա, սեփականություն… Սյունիքից հեռանալիս ասացի՝ այստեղից ես միայն ձեր բոլորի սերն եմ տանում:

– Ամենաերջանիկ պահը:

– Երջանիկ պահեր՝ անթիվ-անհամար… Մեր փառահեղ հաղթանակները, զինակից ընկերներիս հաջողությունները, կաթողիկոսի ընդունելությունը, սյունյաց փառատոնը, ֆուտբոլի աշխարհի մեծերի հետ հանդիպումները եւ այլն, եւ այլն: Բայց ամենացնցողը, խելագարության աստիճանի հասնող ուրախության զգացումը հաղթանակի կերտման ճանապարհին ես ապրում:

– Ի՞նչն է ամենաշատը Ձեզ հիասթափեցնում, մտահոգում:

– Ափսոսանքը, հիասթափությունն ու մտահոգությունը չգիտեմ՝ որքանով են համահունչ կամ տեղին այս պարագայում, բայց սիրտս պայթում է օրեցօր դատարկվող գյուղերը տեսնելով. այսպիսի հաղթանակ պատմական եւ ոչ մի ժամանակաշրջանում կարելի է ասել չենք ունեցել, բայց այսօր դրա պտուղները կարծեք չենք կարողանում վայելել: Ազատագրված տարածքները դեռեւս շարունակում են դատարկ մնալ, հարկավոր է ծրագիր մշակել դրանք բնակեցնելու համար նաեւ ներգաղթի միջոցով: Արտագաղթի ծավալների մեծացումն է մտահոգում, կրթության, մշակույթի հանդեպ ունեցած անտարբերությունը. չէ՞ որ հային այսքան դարեր հայ է պահել նախեւառաջ իր գրագիտությունը: Ցավոք, այսօր շատ հաճախ «մշակութային երեւույթ» է համարվում որեւէ օլիգարխի զավակի ճոխ հարսանիքը: Մեզանում գրագիտությունը գլուխ է խոնարհում տգիտության առջեւ, ե՞րբ պետք է վերջ դրվի այս տգիտության խրախճանքին եւ կարեւորվի աշխատավոր հայի կերպարը, օրվա հերոս դառնան հայ գիտնականները, հայ սպան… Չեմ ուզում տեսնել որոշ պետական, քաղաքական այրերի լկտի, սանձարձակ պահվածքը, երիտասարդ ու խելացի սերուցքի արտագաղթը, լսել սահմանի զոհերի մասին. պետական մտածողությամբ մարդիկ պետք է շատանան, կրթությունը, գիտությունն ու մշակույթն առաջնային համարվեն:

– Ի՞նչ նշանաբանով եք առաջնորդվել ողջ կյանքի ընթացքում, եթե հիարկե այդպիսին առանձնացրել եք:

– Ինձ համար մշտապես շատ կարեւոր է եղել եւ կա չափի ու տակտի զգացողությունը, սիրում եմ գեղեցիկը, ներդաշնակը: Ով ուզում է լինի՝ իշխանավոր, թե շարքային քաղաքացի, չափի զգացումը երբեք չպետք է կորցնի. չէ՞ որ դրանից հարյուրավորները կարող են տուժել:

– Պատկառելի տարիքի շեմին եք հասել: Ձեր կյանքում կարո՞ղ եք առանձնացնել մեկին կամ մի քանիսին, որոնց ցանկացել եք ընդօրինակել, որոնցից սովորել եք:

– Շատերից եմ օրինակ վերցրել, շատերին երկրպագել եւ հավատացել, բայց վերջերս գտել եմ մեկին, ում ուղղակի պաշտում եմ, ով կարող է ծայնը բարձրացնել ինձ վրա, դիտողություն անել: Նրա անունն էլ է Սուրեն, պարզապես հայրանունն է տարբեր (խմբ.՝ ժպտում է, կարծում ենք՝ հասկացաք՝ խոսքն ում մասին է):

– Քաղաքական այդ թոհուբոհի մեջ հասցնո՞ւմ էիք ընթերցել:

– Հատկապես ուսանելու տարիներին անչափ շատ եմ կարդացել, թե՛ հայ, թե՛ ռուս գրականություն: Իմ աշխարհայացքի ձեւավորման գործում հավասարապես ազդեցություն են ունեցել հայ եւ ռուս դասական գրողները: Մի ժամանակ որ հարցնում էին՝ ո՞րն է ամենասիրելի գիրքդ, պատասխանում էի՝ Վոյնիչի «Բոռ»-ը: Երիտասարդ տարիներին նախընտրում էի պատմական թեմաներով գրքեր ընթերցել, ավելի հասուն տարիքում ճաշակս փոխվել է. Միխայիլ Բուլգակով, Հրանտ Մաթեւոսյան ինչքան ընթերցում, այնքան նորություն ես գտնում: Ներկայումս այդքան շատ չեմ ընթերցում, հիմնականում լրատվական դաշտին եմ հետեւում:

– Ապագայի տեսլական ունե՞ք:

– Ես շատ լավատես եմ, համոզված եմ՝ երբեւիցե խելքի կգանք, կշտկվենք, արդարության զգացումը կվերականգնենք, կզգանք այս հող ու ջրի իսկական արժեքը: Այնպիսի կյանք եմ ապրել, որ ինձ ոչնչով չեմ զարմացնի, այսօր իմ հոգսն ընտանիքիս բարօրությունն է, մտահոգությունս՝ ազգիս վիճակը: Բայց համոզված եմ, ինչպես ռուսն է ասում՝ и это переживем:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ճանաչիր ինքդ քեզ

Լենա Հովսեփյանի «Լույսի համը» գիրքը կարդալուց հետո

Լրագրողի հեղինակած գիրքն առանձնակի արժեք ունի: Ժուռնալիստիկան ծանրաքաշ մասնագիտություն է: Լինելով առաջին գծի զինվոր, միշտ չէ, որ նկատվում է լրագրողի ընկնելն ու բարձրանալը, վիրավորվելն ու ապաքինվելը: Եվ նրա գիրքը, գրական նոր երկ է այն, թե արդեն հրատարակված նյութերի հավաքածու, համեստ պարգեւ-շքանշան է:

Իմ աշխատասեղանին Լենա Հովսեփյանի «Լույսի համը» գիրքն է:

Ամբողջական չի լինի բնութագրումը, եթե ասեմ, որ Լենան վաստակաշատ կամ ճանաչված լրագրող է: Լենա Հովսեփյան մարդու, քաղաքացու, սյունեցու, լրագրողի կերպը խիստ ինքնատիպ է՝ բնավորության, սկզբունքի, հավատի, նվիրումի, ձեռագրի ընդգծվող անհատականություն: Ինչ մասնագիտություն էլ նա կյանքում ստացած լիներ, միեւնույն է՝ ի վերուստ, նախախնամությամբ կնքված էր, որ պետք է լիներ ժամանակի քարտուղարը՝ անհանգիստ, հոգսաշատ, այրվող ու չմոխրացող: Լենան համառ է, սկզբունքային ու կարեկցող, նրա տրամաբանության սպեկտրով անցնում-սինթեզվում են երկրի, քաղաքի, գյուղի, շենքի, ընկերոջ, հարեւանի ուրախությունն ու հաջողությունը, հոգսն ու ցավը. վարքն ու ճակատագիրը… Կարողանում է նկատել, զննել, բացահայտել, արժեւորել, ախտորոշել, փորձում է սպեղանի դնել…

> *Յուրտ ու մութ տարիներին խաղից դուրս մնացած լրագրողը մտավ վիրտուալ-էլեկտրոնային աշխարհ իր «lenahovsepyan.com» կայքով: Համացանցում Լենան նորովի հաղորդակցվեց ժամանակին ու տարածությանը:*

Առիթ եմ ունեցել գրելու, որ այցելում եմ Լենայի կայքը, երբ պահանջ եմ զգում հանդիպելու բարուն, ազգայինին, ավանդականին…

Հիմա այդ ամենի խտացումգիրքն իմ ձեռքին է, որտեղ ե՛ւ նոր գործեր են, ե՛ւ կայքից ինձ արդեն ծանոթները: Կարծում եմ, որ գրքի հենքը, որի տեսանկյունով կարելի է դիտարկել ժողովածուն, երեք հարյուրից ավելի նրա խոհափիլիսոփայական մանրապատումները, խոհերը, մտորումները, էսքիզները, լիրիկական արձակ պատկերներն են: Այստեղ գրող-լրագրողը, իբրեւ մարդ-օբյեկտի եւ աշխարհ-սուբյեկտի կապը բացահայտողի, թարգմանչի, երեւում է նորովի՝ ասելիքի ու մատուցման ամբողջության մեջ:

Գրողը խորհում-մտորում, խոսում-խորհրդակցում, բողոքում-ըմբոստանում է ինքն իր հետ: Մենախոսությունը նրա համար «հավատի հավաստագիր» է, որով հնարավորություն է տրվում «…պեղել ինքդ քեզ, պեղել ու ոգի տալ բոլոր հնչած, բայց չլսված ձայներին, զրուցել նրանց հետ, հասկանալ, շոյել նրանց, ժպիտով ողողել»: Եվ, այնուհետեւ, սքանչանում է հեղինակը. «Տե՛ր, ինչ հրաշք է մենախոսության շռնդալից հնարավորության ընծեռումդ. ամեն անգամ դա նոր մեկնարկի կրակոցն է»: Ավելին՝ նրա համար կարեւոր է լռության լեզվի լեզուն, «…որով ունես կարիք՝ հաղորդակցվելու վերերկրային բանականությանը»:

Մարդու, հասարակության եւ «արարչագործության» փոխկապակցության նրա փիլիսոփայությունը սկսվում է իր մանկության Քարահունջից, իրենց այգու թթենուց, Խաչատուր եւ Սոֆյա մեծ պապ ու տատից, Լաստ սարին նայող նրա չորրորդ հարկի պատուհանից, գնում-սավառնում է տիեզերքի անհուններում եւ կանոնակարգվում է բանականությամբ ու նախախնամությամբ ճշտված, բայց չգրված օրենքների մեջ: Նրա համար լռությունը, համառությունը, հիշողությունը, սպասումը, նեղացածությունը, տրամաբանական մտքի ու հոգու զգայարանների մյուս բաղադրիչներն ունեն ձեւ, գույն, համ… Բարությունը չափման միավոր չունի. «օրից բան սպասելուց առաջ մյուս նժարին պետք է դնենք մեր տվածը…»: Եվ տեսնում-հիանում է հեղինակը, «որ մարդկության պարագծից ներս կան լուսատիտիկներ, որոնց լույսի աղբյուրը տալն է՝ ստանալը չակնկալելով»:

Տասնյակ ու հարյուրավոր նման փիլիսոփայական դատողություններ, որոնք արթնացնում, թարմացնում են ընթերցողի միտքը, ճշտում նրա ու աշխարհի կապը, պարտք-անելիքը՝ ապրած օրվա «վարձը» հատուցելու գործում: Եվ հեղինակը բարոյական չի համարում, երբ թույլ է տրվում, որ հիշողությունը ժանգոտի, ամլանա: Եվ հիշեցնում է, որ այնտեղ, «շատ էջերի լուսանցքներում «մինուսներ» կան, պարտքեր կան մարելու, բարոյական պարտքեր, երախտիքի պարտքեր…»:

«Լույսի համը» գրքի երկրորդ բաղկացուցիչը «Գորիս-կյորեսյան» շարքն է, որտեղ զետեղված են տարբեր ժամանակներում գրված մի քանի գեղարվեստական ակնարկներ: Դրանք հայրենի եզերքը՝ ձորը, քաղաքը, գյուղը, դրանց անզուգական գեղեցկությունը, անաչառ, ինքնատիպ, անկոտրում բնավորությամբ նրա մարդկանց ներկայացնելու սեփական փորձեր, բայց ավելի շատ՝ հոգսի ու ցավի, որոշակի արժեքներ կորցնելու վախի ճիչեր են:

Այն, որ մյուսների նման Լենայենց շենքը եւս «մի տեսակ կանացի է, դարձել», որ «…հե՜յ գիտի ժամանակներում», փոստի առաջ դրված ծուռտիկ նստարանի մոտ շաբաթկիրակի օրերին նարդու հերթն «իրար ուտում էր», ու հիմա նստողները տատիկներն են՝ Նինա տատիկի գլխավորությամբ, էն, որ «միգրանտ» է դարձել նաեւ սեւարանցցի Ելենա տատն ու հիմա ո՛չ գյուղացի է, ո՛չ քաղաքացի, էն, որ «հատուկենտ տղամարդիկ էլ ոնց որ շեքսպիրյան ողբերգություններից մոռացված-մնացած լինեն», էն, որ «կուլ տված հոգոցները հաշիվ չեն, վերեւներում «լսելի» չեն…», իրոք, կտխրեցներ մեր հարգարժան ուսուցիչ Ռաֆիկ Արսենիչին, եթե նա հայտնվեր հրաշքով ու հին, բարի օրերի լավատեսությամբ հանձնարարեր Լենային՝ շարադրություն գրել պատուհանից դուրս տեսածի մասին:

Ռուսերեն «ностальгия» շատ գեղեցիկ բառ-արտահայտությունը, որ հունական ծագում ունի, բառարանները թարգմանում են՝ հայրենաբաղձություն: Ես մի քիչ ավելին եմ տեսնում այստեղ՝ անցած-գնացած օրերի վերհուշ, «արմատների» հետ կապի, կորցրած կամ մթագնած արժեքների վերականգնման, բարոյական իդեալների, ավանդույթների ժառանգորդության ապահովման ցանկալի անհրաժեշտություն: Հենց այսպիսի զգացողությամբ է շաղախված «Մեր Մռավյանը» թատրոնի ու Թայիրի դիքի միջեւ» քրոնիկոնը, որտեղ Լենա Հովսեփյանը, «հաշտեցնելով» անցյալի ու ներկայի կապը, փորձել է հավերժացնել ինքնատիպ կոլորիտով այս քաղաքի իր մանկության թաղը, մեկ բառով, մեկ արտահայտությամբ, կամ ինչ-որ դեպքի ենթատեքստով ներկայացրել է այնտեղ ապրող ամեն մեկին: Եվ այդ ամենը ստացվել է տիպական, հյութեղ, խտացված՝ իսկական… «Գորիս-կորեսյան»:

«Լույսի համը» գրքում տպագրված են էլի մի քանի գողտրիկ պատմվածքներ, որոնց կարելի է դիտել իբրեւ «Գորիս-կյորեսյան» շարքի տրամաբանական շարունակություն: Այդ պատմությունների թեման ու միջավայրը նույնն են, ստեղծված են իրական դեպքերի հիման վրա, հերոսները մեր կողքին, տարբեր ճակատագրերով ապրող մարդիկ են:

Ամփոփելով ասվածը, կարծում եմ շռայլություն չի լինի, եթե գրեմ, որ Լենա Հովսեփյանը փոքր կտավում, արդեն քննություն բռնած, շնորհաշատ գրող է: Եվ նրա «Լույսի համը» ժողովածուի լեյտմոտիվը սոկրատեսյան այն սկզբունքն է, որ իբրեւ փիլիսոփայական մարդաբանության գլխավոր չափորոշիչ, կենսունակ է եղել դարեր ի վեր. «Ճանաչիր ինքդ քեզ»:

Մնում է սպասել նոր գործերի:

ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

Երկրորդ անգամ՝ «Սիրո թեւերով»

Ըստ ամենայնի՝ ավանդական են դառնում Կապանի արվեստի պետական քոլեջի փոխտնօրեն, թավջութակահար Աշոտ Խաչատրյանի կողմից անցկացվող գրական-երաժշտական երեկոները: «Դեկտեմբերյան երեկոներ» շարքից անդրանիկ միջոցառումն անցկացվել էր նախորդ տարվա դեկտեմբերի 18-ին: Այս անգամ քոլեջի փոքր դահլիճում դեկտեմբերի 19-ին անցկացված «Սիրո թեւերը» կրող երեկոյին մասնակցում էին ծննդով կապանցի, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար Վահե Փարսադանյանը, ինչպես նաեւ Կապանի արվեստի պետական քոլեջի եւ երաժշտական դպրոցների դասատուները, Ալ.Շիրվանզադեի անվան պետթատրոնի դերասանները: Քոլեջի համերգային փոքր դահլիճի պատերին գեղանկարիչ Ռուբեն Կոստանդյանի կտավներն էին: Երեկոն վարում էր արվեստի քոլեջի դասախոս Լուսինե Հարությունյանը:

Աշոտ Խաչատրյանի փոխանցմամբ՝ միջոցառումը նպատակ ունի ստեղծել մի միջավայր, որտեղ իրենց խոսքը կարող են ասել կապանցի երաժիշտները, արվեստագետները, դերասանները, պարզապես՝ ստեղծագործողները: Վահե Փարսադանյանը, Աշոտ Խաչատրյանը, Լիաննա Ստեփանյանը, Յաննա Ստեփանյանը, Աստղիկ Գրիգորյանը, Իրինա Դավիդյանը, Հասմիկ Մարտիրոսյանը, մյուսները հնչեցրին Էդվարդ Միրզոյանի, Առնո Բաբաջանյանի, Սերգեյ Ռախմանինովի, Գեորգ Հենդելի, Ֆրանցիսկո Տարեգայի, արեւմտաեվրոպացի այլ կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ մեկ ժամից ավելի հանդիսականին դասական երաժշտություն լսելու հաճույք պատճառելով:

Ալ.Շիրվանզադեի անվան պետթատրոնի դերասաններ Գայանե Վարդիկյանը եւ Արթուր Գաբրիելյանը հանդես եկան ասմունքով: Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը կիթառով կատարեց Ֆրանցիսկո Տարեգայի «Լակրիմա» (արցունք) ստեղծագործությունը: Հիշատակի խոսք հնչեց կապանցի տաղանդավոր երաժիշտ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շվիի դասարանի հիմնադիր Արարատ Պետրոսյանի հիշատակին, ասմունքվեց նրա բանաստեղծություններից երկուսը:

Միջոցառման ավարտին Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը շնորհակալություն հայտնեց բովանդակալից համերգի համար, շնորհավորեց ներկաներին մոտալուտ Ամանորի եւ Սուրբ ծննդի առթիվ, իսկ երեկոյի կազմակերպիչ Աշոտ Խաչատրյանը երախտապարտ էր միջոցառման հովանավոր Վարդան Պետրոսյանին, բոլոր մասնակից երաժիշտներին եւ արվեստի քոլեջի տնօրեն Վարդան Քոչարյանին՝ երեկոյի կազմակերպման անմիջական աջակցության համար:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ **Կորել են «Թունել» ՓԲ ընկերությանը պատկանող ներքոհիշյալ մեխանիզմների տեխնիկական անձնագրերը եւ պետհամարանիշները:**
1. ՄՕԱԶ 51-87 ԱԽ տեխնիկական անձնագիրը
2. ՄՕԱԶ 51-88 ԱԽ տեխնիկական անձնագիրը
3. ԵՕ 5111Բ 51-94 ԱԽ տեխնիկական անձնագիրը
4. ՊԴ-8 50-01 ԱԽ տեխնիկական անձնագիրը
5. ՊԴ-8 51-97 ԱԽ տեխնիկական անձնագիրը
6. ՊԴ-5 50-02 ԱԽ տեխնիկական անձնագիրը
7. ԷՕ 2621 46-02 ԱՓ պետհամարանիշը
8. ՊԴ-5 50-02 ԱԽ պետհամարանիշը:
Համարել անվավեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերությունը հայտարարում է մրցույթ վարորդ/օրագրի օգնական թափուր աշխատատեղի համար՝ «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի իրականացման գրասենյակի թիմում աշխատելու նպատակով: Աշխատանքի մանրամասն նկարագրին եւ սահմանված չափորոշիչներին կարող եք ծանոթանալ www.consecoard.am կայքի «Հայտարարություններ» բաժնում: Հետաքրքրված անձինք կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը եւ ուղեկցող նամակը tevosyan@consecoard.am ու h.khachatryan@consecoard.am էլ-փոստի հասցեներին մինչեւ ս.թ. հունվարի 31-ը ներառյալ:
Հարցազրույցի կհրավիրվեն միայն կարճ ցուցակում ընտրվող թեկնածուները:

ՅԱՎԱԿՅՈՒԹՅՈՒՆ Գորիսի «Ա.Օրդյանի անվան շախմատի դպրոցի» ողջ կոլեկտիվը սգում է Գառնիկ էկտուբարյանի ողբերգական մահը եւ ցավակցում նրա ծնողներին ու հարազատներին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Կորել է Սյունիքի մարզի Դարբասի գյուղապետարանի կլոր կնիքը: Համարել անվավեր:

Հունվարի 2-ին Գորիսը հրաժեշտ տվեց Անժելա Բուդաղյանին

Գորիս, Արցախյան պատերազմի նախօրե, դրվագներ

Գորիսի շրջգործկոմի նախագահ Անժելա Բուդաղյանի հուշերից

2016թ. վերջին օրը՝ դեկտեմբերի 31-ին, ութսունմեկ տարեկանում կյանքին հրաժեշտ տվեց կուսակցական, պետական աշխատող Անժելա Բուդաղյանը:
Ծնվել է 1935թ. նոյեմբերի 23-ին:
Ավարտել է Գորիսի Ա.Բակունցի անվան միջնակարգ դպրոցը (1953թ.), ապա Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի բաժինը (1958թ.):
1959-ից աշխատանքային գործունեությունը սկսել է կոմերիտմիության Գորիսի շրջկոմում՝ հրահանգիչ, քարտուղար՝ մինչեւ 1964-ը՝ այդ ընթացքում ավարտելով նաեւ կոմերիտմիության բարձրագույն դպրոցը Մոսկվայում:
1964-66թթ. եղել է կուսակցության Գորիսի շրջկոմի քաղլուսկաբինետի վարիչ:
1966-82թթ. աշխատել է կուսակցության Գորիսի շրջկոմի 3-րդ, ապա՝ 2-րդ քարտուղար:
1982-90թթ. Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահն էր: Այդ պաշտոնում առավել ամբողջական ու բազմակողմանի դրսեւորվեցին նրա կազմակերպչական ունակությունները: Նկատելի ներդրում ունեցավ Գորիսի շրջանի եւ հատկապես գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական ու հոգեւոր-մշակութային զարգացման գործում:
1990-96թթ. աշխատել է Գորիսի շրջանային մշակույթի բաժնի վարիչ, այնուհետեւ մշակույթի աշխատողների արհմիության շրջկոմի նախագահ:
Անժելա Բուդաղյանը կողակիցն էր ճանաչված լրագրող Էդուարդ Ջոհրաբյանի:
«Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմն ափսոսանք է հայտնում Անժելա Բուդաղյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում նրա հարազատներին ու մերձավորներին:
Վերջին ամիսներին Անժելա Բուդաղյանը փորձում էր հուշեր գրել՝ մի մասն ուղարկելով «Այունյաց երկրի» խմբագրություն: Այդ հուշերից երկու դրվագ՝ ստորեւ:

1988թ. աշնանը Գորիսի իշխանությունների առջեւ մի նոր խնդիր էր ծառացել՝ կապված արցախյան իրադարձությունների հետ: ՀԿԿ կենտկոմը եւ ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում էին ընդունել՝ Լեռնային Ղարաբաղին օգնություն ցույց տալու համար: Մասնավորապես, հաշվի առնելով ձմռան մոտենալը, Ղարաբաղում պետք է կառուցվեին բնակելի տներ՝ Սումգայիթից փրկված հայերին տեղավորելու համար: Այդ նպատակով Ստեփանակերտ պետք է տեղափոխվեին շինանյութ, շինտեխնիկա, սարքավորումներ: Իրավիճակը, սակայն, բարդացել էր նրանով, որ Լաչինի ղեկավարությունը (չնայած Հայաստանի իշխանություններն այդ քայլը ձեռնարկել էին Մոսկվայի գիտությամբ) կտրականապես մերժում էր իր վարչական տարածքով երթեւեկության վերականգնումը: Միաժամանակ՝ որոշակի համաձայնություն էր ձեռք բերվել Կուբաթլուի ղեկավարների հետ՝ տրանսպորտային միջանցք ապահովելու հարցով: Եվ Գորիս-Ստեփանակերտ, Սիսիան-Բաքու երթուղային ավտոբուսներն անցնում էին Կուբաթլուի տարածքով, բայց ուղեկցվում էին Գորիսում տեղաբաշխված զինվորական կոնտինգենտի ներկայացուցիչների կողմից: Այդ պայմաններում Գորիսի իշխանությունները պետք է աջակցեին, որ Հայաստանի տարբեր վայրերից Արցախ առաքվող բեռներն անվնաս տեղ հասնեն:

1988 թվականի նոյեմբեր ամիսն էր, աշխատասենյակում էի, հեռախոսը զանգահարեց, մեր հայրենակից, արձակագիր Սերո Խանզադյանն էր: Նա ասաց, որ կարեւոր խնդրի մասին պետք է խոսի, եւ այդ խնդիրն անպայման պետք է իրագործվի: Գորիս է գալիս տասը մեքենայից բաղկացած շարասյուն՝ բեռնված շինարարական նյութերով, գործիքներով եւ սարքավորումներով, ուղեկցող մարդկանցով: Նրանք պետք է գնան Ստեփանակերտ՝ օգնելու փախստականների համար բնակելի շենքերի կառուցմանը (մեր շինարար տղաներն ունեին մեկ այլ առաքելություն եւս՝ հարկ եղած դեպքում զենք վերցնել ու պաշտպանել Արցախը): Շարասյունը Գորիս հասավ օրվա երկրորդ կեսին: Վարորդները եւ ուղեկցող անձինք տեղավորվեցին կուսակցության շրջանային կոմիտեի շենքում եւ սպասում էին նոր հրահանգի: Ես հանդիպեցի նրանց հետ, խնդրեցի ներկայանալ, եւ քննարկեցինք հետագա անելիքները: Ավտոշարասյունն ուղեկցողների մեջ էին ՀՀՇ (Հայոց համազգային շարժում) կենտրոնական մարմնի մի քանի ներկայացուցիչներ՝ Երեւանի պետական համալսարանի մաթեմատիկայի դասախոս Բաբկեն Արարքցյան, ֆիզիկայի ինստիտուտի աշխատակից Դավիթ Շահնազարյան, Հայաստանի գրողների միության անդամ Վանո Սիրադեղյան եւ այլք: Նրանք բացատրեցին, որ նպատակ ունեն Ստեփանակերտ հասնել Լաչինով՝ Արցախում փախստականների համար կառուցվելիք բնակելի շենքերի շինարարությանն օգնություն ցույց տալու եւ, իրավիճակը սրվելու դեպքում, հայ բնակչությանը պաշտպանելու համար (վերջին հանգամանքը, իհարկե, գաղտնի էր պահվում): Շրջկոմի առաջին քարտուղարը բացակայում էր՝ գտնվում էր արձակուրդում: Նրան փոխարինում էր երկրորդ քարտուղար Սուրեն Վարդանյանը: Ինձ վրա էր դրված շրջանի ընդհանուր ղեկավարությունը: Խնդիրն այսպես էր դրված՝ ավտոշարասյունը Լաչինո՞վ հասցնել Ստեփանակերտ, թե՞ Խնձորեսկով: Ես դեմ էի Լաչինի տարբերակին, քանի որ այդ ուղին անցնում էր բարձրադիր գոտիով, շարասյունը պետք է գնար ձորերով ու բարձրանար: Մյուս կողմից՝ Լաչինի ղեկավարությունը շատ խիստ էր տրամադրված՝ տարբեր պատճառաբանություններով թույլ չտալ իր տարածքով բեռների փոխադրումը: Այդ ճանապարհին կարող էին նաեւ ադրբեջանցիների կողմից պատրաստված ծուղակներ լինել, մի խոսքով անվտանգությունն ապահովված չէր: Ստեփանակերտ մեկնող շարասյան մասին իմացել էր նաեւ Լաչինի կուսշրջկոմի առաջին քարտուղար Մամեդովը: Նա տեղյակ էր նաեւ մեր տղաների վճռականության մասին՝ Ստեփանակերտ հասնել Լաչինով՝ ամեն գնով: Նա զանգահարեց ինձ եւ խնդրեց, որ շարասյունը Լաչինով չմեկնի: Իհարկե, սարսափում էր, որ շարասյունն իր տարածքով անցնելու դեպքում պատասխան պետք է տա Բաքվի իր ղեկավարությանը, բայց պատճառաբանում ու խորամանկում էր, որ ճանապարհը դժվարանցանելի է, որոշ տեղերում՝ սառցակալած: Նրա կարծիքն այս դեպքում բնավ կարեւոր չէր, սակայն համընկնում էր մեր դիրքորոշմանը: Ես տղաներին հորդորեցի մեկնել Խնձորեսկով՝ բացառապես անվտանգության նկատառումներից ելնելով: Նրանք էլ մշտական կապի մեջ էին Վազգեն Մանուկյանի հետ: Իմանալով առաջացած դժվարությունների ու տարաձայնությունների մասին՝ հաջորդ օրը Գորիս է ժամանում ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Մեզ հետ եւ ՀՀՇ-ի ներկայացուցիչների հետ խորհրդակցելուց հետո նա փորձեց խնդիրը լուծել Ադրբեջանի իր գործընկերոջ հետ խորհրդակցելով: Բայց Գորիսից չստացվեց կապ հաստատել Բաքվի հետ, եւ Ֆադեյ Տաճատիչը վերադարձավ Երեւան՝ այնտեղից կարգավորելու խնդիրը: Երկու օրից նա նորից է ժամանում Գորիս՝ համաձայնություն ստացած, որ շարասյունը ոչ թե տասը մեքենայով գնա, այլ՝ 4-ական մեքենայով՝ Խնձորեսկով, որն ավելի ապահով է: Տղաներն անցնում են գործի, թեեւ իրենք հակված էին Լաչինով ու ամբողջ շարասյունով գնալու տարբերակին: Մինչ այդ մենք հոգում ենք նրանց հոգսերը (ինձ օգնում էր կոմերիտմիության շրջկոմի քարտուղար Սուսաննա Սարգսյանը): Արդեն պատրաստ էինք շարասյունը ճանապարհելու (ներկա էին նաեւ Կուբաթլուի շրջանի միլիցետը եւ Գորիսի ուժային մարմինների պատասխանատուները), երբ Ներքին Խնձորեսկի տարածք հասավ Սիսիան-Բաքու երթուղային ավտոբուսը: Ավտոբուսում կային նաեւ հայեր: Այնտեղ հավաքված տղաները հայ ուղեւորներին հանեցին ավտոբուսից ու ցանկացան նավթաշշերով հրկիզել ավտոբուսը: Ավտոբուսը մեր տղաների կողմից շրջափակման մեջ առնելու լուրը հայտնեցին ինձ, եւ ես շրջանի դատախազ Թաթուլ Խանջյանի, միլիցետ Գագիկ Մաղաքյանի ու պետական անվտանգության կոմիտեի տեղական կառույցի ղեկավար Արկադի Հովհաննիսյանի հետ անմիջապես մեկնեցի Խնձորեսկ, եւ ապահովվեցինք ուղեւորների անվտանգությունը, կանխեցինք ավտոբուսի հրկիզումը: Իսկ բեռնատարների շարասյունը Կուբաթլուի ճանապարհով շարժվեց դեպի Ստեփանակերտ: Ֆադեյ Սարգսյանը ցանկություն հայտնեց անձամբ լինել ուղեկցողների հետ, որպեսզի շարասյունն անվտանգ տեղ հասնի: Նրա հետ մենք էլ ճանապարհվեցինք, մեզ հետ էր նաեւ Մոսկվայի ներկայացուցիչը՝ ԽՍՀՄ ՆԳ նախարարի տեղակալ Երինը, ով Գորիս էր ժամանել կառավարության նախագահի հետ: Ճանապարհին ոչ մի խոչընդոտի չհանդիպեցինք: Ընդառաջ եկան Հադրութի շրջանի կուսակցական, խորհրդային ղեկավարները: Ֆադեյ Տաճատիչը ցանկություն հայտնեց շարունակել մնացած ճանապարհը եւս, ես առարկեցի՝ պատճառաբանելով, որ Հայաստանի կառավարության նախագահին սադրանքի մեջ կարող են ներքաշել ճանապարհին: Մենք հետ դարձանք Խնձորեսկ, որտեղ Վանո Սիրադեղյանը զրուցում էր ուղեւորատար ավտոբուսը շրջափակման մեջ առած գորիսեցիների հետ, բացատրելով, որ պետք չէ վնասել ավտոբուսը, եւ ավտոբուսը կճանապարհեն այն ժամանակ, երբ մեր ավտոշարասյունն անվտանգ տեղ կհասնի: Ավտոբուսի ադրբեջանցի ուղեւորներին ստիպված տեղավորեցինք Գորիսի հյուրանոցում, եւ հաջորդ առավոտյան, լսելով մեր տղաների՝ անվտանգ տեղ հասնելու լուրը, նրանց հնարավորություն տվեցինք շարունակել ճանապարհը:

***

Ղարաբաղյան շարժումը մեծածավալ բնույթ էր ստացել, ըմբոստությունը հասել էր նաեւ ուսանողական կոլեկտիվներ, որոնք կազմակերպում էին միտինգներ, ցույցեր, բողոքի երթեր՝ իրենց մեջ ընդգրկելով նաեւ աշխատավորական կոլեկտիվներին: Կողմնակից լինելով Ղարաբաղյան շարժման եւ Ղարաբաղն Ադրբեջանից ազատելու գաղափարին, մենք՝ ղեկավարներս, դեռեւս պայքարում էինք քաղաքը եւ շրջանի գյուղերն իրարանցումներից, միտինգներից, ցույցերից հեռու պահելու համար:

Այդ ժամանակ կցված ընկերներ կային Երեւանից՝ սկզբում՝ ՀԿԿ կենտկոմի կուսակցական բաժնի վարիչ Արզումանյանը, հետո՝ բնակկոմունալ տնտեսության նախարար Ռաֆայել Մինասյանը: Մեզ կանչեցին կուսշրջկոմ՝ հերթական հանձնարարություն տալու: Լուրեր էին պտտվում, որ այդ օրը՝ ժամը 2-ին, քաղաքի ուսանողները ցույցի պետք է դուրս գան հրապարակ: Կցումներ կատարեցին: Ինձ եւ ներքին գործերի բաժնի պետ Գագիկ Մաղաքյանին կցեցին գյուղտեխնիկումին: Մենք գնացինք գյուղտեխնիկում՝ հավաքեցինք ուսանողներին, ներկայացրինք մեր կարծիքը, խնդրեցինք, որ ցույցի դուրս չգան, որովհետեւ այդ ճանապարհն օգուտ չէ Ղարաբաղի հիմնախնդրի լուծմանը: Նրանք հանգիստ էին եւ ոչինչ չէին ասում, թվում էր, թե ինչպես ասվել է, այդպես էլ կանեն: Ժամը 2-ին մի քանի րոպե էր մնացել, ես իջել եւ կանգնել էի գործկոմի շքամուտքի մոտ, սպասում էի ՆԳ բաժնի պետին, երբ ուսանողների խումբը բացեց դռները՝ ներքաշելով ինձ այդ հորձանուտի մեջ, տարավ մինչեւ քաղաքի գլխավոր հրապարակ: Բոլոր կողմերից եկել էին ուսանողները: Մանկավարժական ինստիտուտի եւ մանկավարժական ուսումնարանի ուսանողներն իրենց հետ բերել էին նաեւ աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչներ: Եվ գրավելով քարե ամբիոնը, կազմակերպեցին հանրահավաք: Խոսեցին Ղարաբաղն Ադրբեջանի կազմից հանելու եւ Հայաստանի կազմի մեջ ներառելու, Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից կատարած հայերի ջարդերի, վայրագությունների, հայ ազգի նկատմամբ կատարած ոճրագործությունների մասին: Ելույթները գրագետ էին, չափավոր, ամեն ինչ անցավ նորմալ ձեւով: Արդեն օրվա վերջ էր, բայց ցուցարարները չէին ազատում քաղաքի հրապարակը: Ենթադրեցինք, որ այստեղ մի հարց կա՝ նրանց տանջող, եւ փորձեցի իմանալ, թե ինչ անակնկալ կարող է լինել: Հանկարծ նկատեցի, որ շրջխորհրդի գործկոմի շենքի տանիքին մարդ կա, ով գնացել էր այնտեղ՝ մոտենալու ծածանվող դրոշին: Նա հանեց Խորհրդային Հայաստանի դրոշը եւ տեղն ամրացրեց եռագույնը… Կանչեցի պահակ Հմայակ Կոլյանին եւ խնդրեցի, որ իջեցնի երիտասարդին ու պետական դրոշը վերականգնի: Երիտասարդը չէր ենթարկվում, եւ քիչ մնաց իրար գցեին տանիքից ցած: Հրապարակում էին կանգնած նաեւ թատրոնի դերասաններ Գագիկը եւ Մովսես Գյորգիսյանը: Խնդրեցի Գագիկին, ով էդիկի ընկերն էր, որ տանի՝ որտեղ ուզում է կպցնի եռագույն դրոշը, միայն թե գործկոմի շենքի վրա չլինի. դա, բնականաբար, լուրջ հետեւանքներ կարող էր ունենալ: Ընդառաջ գնալով խնդրանքիս՝ եռագույնը տեղադրեցին թատրոնի շենքի տանիքին, իսկ գործկոմի շենքի վրա վերականգնվեց Խորհրդային Հայաստանի դրոշը:

Տեւական ժամանակ Գորիսի կենտրոնում միաժամանակ ծածանվում էին ե՛ւ եռագույնը, ե՛ւ Խորհրդային Հայաստանի դրոշը:

■

Այունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1735, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 19.01.2017թ.: